ԺԱՌ

ՀԱՅՈՐԴՈՒԹԵԱՆ

Բնական է մարդոյ բազմաց իրաց տենչալ, այլ յաւէտ իմաստուն տենչ՝ հոգեւորականին տենչալ. և փառն զի ուր պատրաստ է յօժարութիւն Աստուածասէր, անգ և ոչ մի արգել. Ահա՛ ի խնդրոյ տենչանաց և արգելանաց Վանանցի հիւսիսամերոյ Տ. Գեւորգ Բարեշնորհ Վարդապետին Տէր Յովհաննէսեան Պիսքաբանի տարբ Ամենայն ազատ ա՛ ի բան.

281.6

ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՃԱՌՕՐԷՆ
ՓՐԿԱՀԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ

Ի ՀՈԳԵԼՈՅՍ ՅՈՎՍԵՓ ՎԱՐԺԱՊԵՏԷ

ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՐԱԲԿԵՐԻ ՍԱՂՄԿԱՅ ԳԵՂՋԷ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԼԵՀԱՓԱՅԼ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. ՍԱՐԳԻՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ա II 36294

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1860

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Տեսանելի ճշմարտութիւնք յայտնեալք Աստուծոյ՝ որք նկատին 'ի փրկութիւն, խորհուրդք են անհաս՝ անմոլար Աստուածպաշտութեան և հաւատոյ։ Այլ արդ՝ եթէ որ առանց գործնական հաւատոց, սակ միայն տեսական հաւատով նկատեսցէ 'ի նոսա՝ որ անգործ է և անկենդան, մոլորի յոյժ չարաչար. զի տեսական հաւատով միտք և եթ արդարանայ 'ի մոլորութենէ, և ոչ հոգին 'ի մեղաց։ Այլ մեղանչել 'ի ճշմարտութիւնս հաւատոյ՝ մեծագոյն յանցաւորութիւն է Աղանդաւորաց՝ քան Հեթանոսաց. զի հեթանոսք առ բնական ճշմարտութիւնն անիրաւին, իսկ նոքա առ գերբնականն ամբարշտին։

Եւ արդ՝ երիեակ խորհուրդքն են հաւատոյ. Երրորդութեան, Մարգեղութեան, և Հաղորդութեան. և երեքեան ևս 'ի վերս են քան զհասումն մարդկան։

Խորհուրդն Հաղորդութեան կախի զխորհրդոյ Մարգեղութեան. և տիրապէս իսկ իսկութիւն իրական պատարագի խաչին, ոչ օրինակ կամ սոսկ յիշատակ. վասն որոյ և նոյն ըստ գոյացութեանն և հանգոր, իւրով իսկ Արեամբ հաստատեալ զնա Փրկիչն որպէս կտակ վերջին՝ 'ի յիշատակ և 'ի կցորդութիւն չարչարանաց իւրոց և մահուն. զի ընդ տեսակաւ անմահագործ հացին՝ բոլոր Քրիստոս Աստուածութեամբ և Մարդկութեամբ կայ 'ի ձեռն միաւո-

թութեան։ Լոյս որպէս այն Մարմին միաւորեալ է ընդ Քրիստոսի, նոյնպէս և մեք Հայցիս այսու ընդ նը-մա յօգիմք. և ըստ որում միութեանն յօգ՝ է նոյն Մարմին Քրիստոսի, մի է ապա և ի մեզ յամենեսին յօգաւորութիւնս այս Աստուածային. վասն որոյ և ի նոյն իսկ միջէ Հայէ անտի ճաշակեմք ամենեքին, ո-րով նա ընդ մեզ կցորդի, և մեք ընդ նմա՝ և ընդ միմեանս։

Մի՛ ուրեմն ըստ տեսանելոյն դատեսցէ ոք, այլ ըստ իմանալոյն հաւատացէ՝ խորհրդաբար և հո-գևորապէս. զի խորհրդականապէս լինի սա Մարմին և Արիւն Քրիստոսի, և ոչ երևելապէս. յայր սակս և ասի խորհուրդ հաւատոյ, զի այլ ինչ տեսանեմք՝ և այլ ինչ հաւատամք. ապա թէ ոչ՝ ո՛չ էր խորհուրդ։

Յայլ Աստուածագործ պանչելիս՝ Փրկիչն ոչ այն-պէս հրաշացոյց զտիրական իւր զօրութիւն, որպէս ի յետին ցանկացեալ Ընթրիսն անդ ընդ աշակերտսն՝ ի սահմանելն զայս խորհուրդ ահաւոր։ Վասն զի որ-պէս ըստ մարմնոյ՝ ամենայն ոք ծնուանդ ունի և սը-նուանդ, նոյն և ըստ հոգւոյ. Մկրտութեամբ ունի ըդ-վերստին ծնուանդ, և սուրբ խորհրդոյն ճաշակմամբ՝ զսնուանդ. քանզի մարդի մարդ ի սկզբնական մեղայ՝ Մկրտութեամբ, և ի նեղգործական մեղայ՝ Ապաշ-խարութեամբ, յետ այնորիկ անանի և ամօք՝ սուրբ խորհրդոյս ճաշակմամբ. ապա գրաւական է սա ան-մահութեան ամենեցուն արժանաւորաց, որպէս հո-գւոյ՝ նոյն և անմահ յարութեան մարմնոց ի կեանս։ Իսկ յայսմ է բանն, որ ամենայն բազմաբիւր հոգեւոր բարեաց է ծայր. անարատ խղճիւ երկանկահաւատ մերձենալ։

Լոյս վասն զի եղեն՝ և են, որք յաղագս այսպիսի մեծամեծացն Աստուծոյ փոքր խորհեցան և խորհին, Աստուածայինն ամբարշտալով և զանձինս իւրեանց

ինասելով, Եկեղեցի Աստուծոյ միշտ ճակատ ընդդէմ
եկաց պերճայաղթ։ Ի ժամանակի յայսմիկ՝ մինչ ա-
զանդական ամբարշտութիւն տիրու է ամենայն ուրեք,
մի է և առաջիկայս մատենիկ ՉԷն ուղղափառ Եկե-
ղեցւոյ զօրեղ զենու տուրբ Գրոց. զոր դիպեցուցիչ
խմաստուն կիրթ ճակատահարն յառաջ քան զամս
ինչ ուղղեաց վայելուչ. այն է՝ Արարկերի Սաղմկայ
գեղջէ Աստուածխմաստ Հոգեղոյս Յովսէփ վարժա-
պետ Մարտիրոսեան։

Այս՝ զի մի որպէս բազում անգամ պատահի,
այս օգտակար վաստակ բարի Աւանն արժանագով աշ-
խատութեան՝ ի ձախող ինչ արկածից անհետացցի,
տուաւ սա ի Տիպ, լեալ անեղբայր՝ թէ այս և
գործ ԱՆՃառաշնորհ այս Խորհուրդ հաւատոյ՝ ի-
նչ ամենեցուն հաճելի։

Ա-ՄԳ ԸՍՍԲՐ
ԳԷՈՐԳ Եպիսկոպոս։

Ո՛աշակեցէք և տեսէք՝ զի քաղցր է Տէր։
Երանեալ է այր՝ որ յուսա՛ ի նա։

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՃԱՌՕՐԵՆ

ՓՐԿԱՀԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Յաղագս՝ Ի Աբրահամոս պատարագն Խոհակաց՝
Եր օրինակ Փրկին։

ԱՀԱՒՈՐ և սքանչելի է խորհուրդ սրբոյ Պատարագին, զի ոչ յանանոյց գառն կամ ոչխար զենանի, այլ նոյն ինքն Քրիստոս մատչի Գառն Աստուծոյ. բայց մեք տեսանեմք հանապազ ի վերայ սրբոյ սեղանոյն մատուցեալ հաց և քաղաք, արդ ուր է հարին և սրիսն։

Յառաջագոյն ցուցեալ Աստուծոյ Հրգրիտ պատկեր Հշմարիտ Ողջակիզին ընտանեաց պատանին Իսահակ՝ բարձեալ յինքեան զփայտս իրքև զխաչափայտս, հուր ևս կալեալ ի ձեռին նշմար սիրոյ խաչաբարձին՝ իբր ի Գողգոթայ ի սեղան անդր ընթանայ. և յորժամ մերձենայ, յայնժամ ի միտս եկեալ հարցանէ ցհայր իւր. «Հայր . . . ահա հուր՝ և ահա փայտս. ուր է ոչխար յողջակէզ»։ Իբ զինչ հայրն պատասխանէ. չասէ թէ մուռացայ ընդ մեզ բերել, և կամ արդ բերեն ծառայք մեր. նաև ոչ զկամն իւր յայտնէ՝ թէ ունիմ զքեզ իսկ առնել ողջակէզ. այլ ամենեքն զնա մեղմագին այսուրիկ հոգեւոր բանիւն ասելով, «Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ արդեակ»։ Ծնդ. ԻԲ. 7, 8։

Իսկ ընդէր ասա լուեաց Խահակ՝ որում չեղև ինչ ակնկալութիւն տեսանել զմի յոչխարաց անտի հօր իւրոյ ի զենուլ։ Բանզի հաւատաց ի լսել զբանն թէ «Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ», զայն և եթէ ակսաւ խորհել ի սրտի իւրում. վասն զի Հոգին սուրբ՝ որ երաց զբերան Աբրահամու մարգարէաբար պատասխանեալ, անդ լուսաւորեաց և զմիտս Խահակայ հաւատալ, թէ տեսցէ Աստուած զոչխարն յողջակէզ՝ որ իւրոյ իսկ իցէ. խելամուտ եղեալ բանին Աբրահամու՝ որ ասաց թէ Աստուած տեսցէ ոչխար յողջակէզ, այլ թէ՝ Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ։ Այսպա ի բաց թողեալ ի մտաց զգ-խնդրելն իւր ոչխար՝ զորմէ հարցանէր, և խորհեր ընդ միտս զայն իւր՝ զոր խօսեցաւ Աբրահամ. և այն պէս մտախորհ և մտադիւր ընդ այն ճա-նապարհ անձին իւրոյ մահնդրաւէր սեղանոյն։ Ի-բրագէ Աբրահամ հանել զորդին իւր ի սպանդ, և որդին կամակար երանէ ի սպանդապան. սա ժամա-նեալ՝ տեսանէ զինքն լինել օրինակ հանդերձեալ Ճըշ-մարիտ Ողջակիզին. որ և ըստ Ճշմարտին ըստ այնմիկ՝ «Իբրև զոչոջ առաջի կորչի իւրոյ անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր»։ Գ՚ որդ. Ը. ՅՁ։

Լրդ՝ ոմն յերկոցունց անտի գերօրինակ համա-րեացի. հայրն՝ եթէ որդին։ Այս ընդ երկոսին իսկ առ հաւարակ զբանչացեալ հիանամ. բանզի հայրն կամի մատուցանել ողջակէզ զորդին սիրելի, և որդին կա-մի մատուցանիլ ի սիրելեալ հօրէն։ Օ՚ինչ գործեա Աբրահամ. զենում զորդի իմ յողջակէզ Աստուծոյ։ Օ՚ի է բեզ խահակ. զենու զիս հայր իմ յողջակէզ Աստուծոյ։ Հայրն զենու՝ որդին զենանի, և երկոքին միաբան առ ի մի վախճան։ Յոր վախճան. ի կատա-բումն Աստուածային հրամանի։ Այ՝ անդուստ երևի ի նոսին պատիւեր ինչ, կամ՝ ուրուական իմն նմանու-

թիւն Աստուածային. զի Աբրահամ՝ յորմէ խատակ որոշեալ անձինք, և համակամութիւն նոցին՝ իբրև մի հոգի ի նոսին։ Անօրինակ միաբանութիւն։

Եւ այն գործ անմեան և անօրինակ միաբանութեան նոցա՝ եղև նմանութիւն ծայրագոյն մարդասիրութեանն Աստուծոյ, և օրինակ փրկչական Պատարագին։ Քանզի Աբրահամ այնչափ սիրեաց զԱստուած, մինչև զորդին իւր մատուցանէր նմա ողջակէզ. և խատակ ևս այնչափ սիրեաց զԱստուած, մինչև զանձն իւր եւս լինել ողջակէզ։ Եւ ահա ըստ օրինակի և նմանութեան ըստ այնմիկ, «Այնչափ սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին եւս» մեզ. Յովհ. Գ. 16։ Եւ այնչափ մեծ եղև սէր Որդւոյն Աստուծոյ առ մեզ, մինչև զանձն իւր եդ ի վերայ մեր. և արդարև «Մեծ ևս քան զայս սէր՝ ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց»։ Յովհ. ԺԵ. 13։ Ահաւասիկ չափ անչափելի սիրոյն Աստուծոյ, այս է՝ անձնատուր պատարագ լինել Որդւոյն Աստուծոյ կամաւք և հաճութեամբ Հօր՝ ի հաշտութիւն և ի հաղորդութիւն մարդկան ընդ Աստուծոյ։

Իսկ զինչ իցէ սակ հաղորդութիւն։

Եւ յաղագս երանելի հաղորդութեան։

Հաղորդութիւնն հասարակօրէն առեալ է գործողական կցորդութիւն որ և իցէ գործակցեալ իրաց. իսկ հաղորդիլն՝ աստանօր ի բանիս առեալ է բաժանորդ լինել ուրուք ընդ փառս կամ ընդ վիշտս պղծոյ ուրուք. զոր մին ունի տիրաբար, և միւսն ունիցի հետևաբար։ Օրինակ. Թագաւոր մտեալ ի պատերազմ, և ի սաստկանալ մարտին յորժամ նեսաք թշնամեաց տեղան ի վերայ, և սուրբ զիւրև պատեալք

և բաղուկք ի հարուն ամբարձեալք տեսանին. սա-
կայն թագաւորն յայնմ մեծի փոանդի ոչ ինչ երկու-
ցեալ ի սատակութենէ մարտին, և ոչ փոյթ ինչ ա-
բարեալ զհարուածոց և զվիրաց իւրոց անձին, ամե-
նայն զօրութեամբ նահատակեալ արիաբար հարցէ
զախոյեան իւր զիշնամին. և զզօրս նորա խորտակեալ
և խսրտաւ ընկեալ՝ զամենայն զդանձ և զտացուածս
նորին յաւարս առեալ դարձցի փառաւք իւրոց յաղ-
թանակին. յայնժամ և զօրականքն իւր՝ օրք հետևա-
բար կցորդք եղեն հարուածոց և վիրաց արքային
իւրեանց, հաղորդ լինին իրաւամբ ընդ յաղթական
փառսն նորին. և այս՝ է բան Առաքելոյն, զի «Լ-
թէ չարչարանացն կցորդք լինիմք, ապա և փառացն
հաղորդք լինելոց եմք». Հռովմ. Ը. 17։ Իսկ զորպիւ-
սութիւն փառաց երկնաւոր թագաւորին մերոյ՝ ո-
րում զինուորեալ եկեղեցի ակն ունի ընդ երանելեա-
ցին տեսանել, ոչ է մարթ բանիւ ցուցանել. փոսն
զի որպէս ոչ աք տեսեալ է զԱստուած ատ՝ի կենաս
յայսմիկ, նոյնպէս և զփառս նորին՝ զոր երանելեալք
տեսանեն և վայելեն՝ ոչ աք է տեսեալ, ոչ աք լուեալ,
և ոչ՝ի սիրտ ուրուք նկարեալ. այլ զոր խոստացաւ յաղ-
թող զորագլուխն իւր Քրիստոս, զնոյն հաւատայ՝
թէ փառք են անճառելի, փառք երկնից արքայու-
թեան, փառք են անեղ Աստուածութեան. «Զոր
ակն ոչ եսես, և ունկն ոչ լուաս, և՝ի սիրտ մարդոյ
ոչ անկաս, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւ-
րոց». Ա. Կորն. Բ. 9։ Լրանական հաղորդութիւն։

Յաղագս Շնորհական հաղորդութեան։

Իսկ լսումն եկեղեցւոյ՝ որովհետև անկարանայ
ըստ լսութեանն իւրաքանչիւր հաւատացելոցք չարչ-
չարակից լինել Քրիստոսի, որպէս զի ապա կարասցէ

ըստ լուութեանն երանելոյն հաղորդելի փառաց նորա, վասն այնորիկ Տէրն փառաց ըստ առաքելական մարդասիրութեան իւրոյ գթացեալ կամեցաւ յիւրմէ ընտրել զպահապանութիւն կարողութեան Եկեղեցւոյ՝ բաշխելով նմա զԱստուածախառն մարմին և զարիւն իւր ուտել և ըմպել, և նովին հաղորդ լինել փառաց իւրոց. զի որ ոչն կարողանայ ժառանգորդ լինել փառաց իւրոց երանելոյն հաղորդութիւնամբ, կարողացի Աստուածախառն մարմնոյ և արիւնն հաղորդութեամբ. Հնարհանն հաղորդութիւն.

Յաղագս երանելոյն և Շնորհելոյն հաղորդութիւն դիանգամայն.

Որդ՝ յորժամ այնու շնորհելոյն հաղորդութեամբ անչափելոյն հոգիք բարեգործ հաւատացելոց, ընդ որս դասին և հոգիք մկրտեալ անմեղ տղայոց, որպէս հաղորդութիւնն երանելոյն՝ նոյնպէս և հաղորդութիւնն շնորհելոյն միապէս բնակեցուցանէ զնոսա ի Քրիստոս՝ և զՔրիստոս ի նոսա. «Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի, և ես ի նմա». Յովհ. Զ. 57. Որ և ի յարութեան մեռելոց՝ միապէս «Վերապարանակից առնէ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց». Փիլիպ. Գ. 21.—Յամենայնի.

Օգտն ևս գիտեմք, զի փառք Որդւոյն Աստուծոյ՝ որում մ'ԵԹԷ հաղորդեսցին երանելոյն հաղորդութեամբ և ԵԹԷ շնորհելոյն հաղորդութեամբ, նոյն փառք են ի կողմանէ Տեառն փառաց. որպէս շնորհք առաքելութեան, շնորհք մարգարէութեան, շնորհք վարդապետութեան կամ ի լեզուս խօսելոյ և թարգմանութեան. «Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ Հոգի նոյն է. ԵԹԷ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է». Ա. Կորն. ԺԲ. 4, 5. Նոցա ի կողմանէ

հաղորդեցելոյն՝ ըստ իւրաքանչիւր վաստակոց և ա-
ռաքինութեան իւրեանց. մի քան զմի առաւելու-
թեամբ զանազանեալ. որպէս «Այլ փառք արեգա-
կան, և այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, և
աստղ քան զաստղ առաւելէ փառաւք». Ա՚Կոր. ԺԵ. 41.
Իսկ զոր մանաւորապէս առեալ կոչեմք սուրբ հաղոր-
դութիւն, է խորհուրդն ահաւոր. զոր՝ Հոգին սուրբ
ի Քրիստոսէ՝ կատարէ՝ ի ձեռս Պատարագիչ քա-
հանային յասելն անդ էական բանին, փոխարկելով
զհացն՝ ի մարմին և զբաժակն յարիւն իւրոյ էակցին.

Այլ են սմանք յազգս Յունաց, թերեւս առեալ
՝ի բանից սրբոյն Կիւրղի Երուսաղէմացւոյ՝ որ՝ ի
Ճառն սրբալոյս Միւռոնի, առաւել մինչ եգեալ՝ ՝ի
ժամանակ մաղթանաց Պատարագչին՝ քան՝ ի կէտ
Ներգործութեան Աստուածախօս էական բանին, զոր
Փոխարկութիւնն կարծեն յայնժամ լինել, յորժամ
զկնի այնր էական բանին՝ Պատարագիչն մաղթէ ա-
ռաքել զսուրբ Հոգին. և՝ ի նոյն մաղթանս յարէ ա-
սելով «Որով զհացս զայս օրհնեալ՝ ՝Ճշմարտապէս ա-
բասցես մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Ո-
րով զբաժակս զայս օրհնեալ՝ ՝Ճշմարտապէս արասցես
արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». Պարարգ.
Եւ այնու ոչ թէ զհաւատս խարեն, այլ հայելով՝ ի
կարգ գրուածոյ պատարագամատոյց խորհրդատեառ-
բին, և՝ ի կարգէ յետագոյս մաղթանաց նորին՝ զժա-
մանակ որոշեն. Իսպ ներգործութիւն այնր էական
բանին՝ ըստ որում է գործողութիւն Աստուածային
կամաց միութեան, առանց որոշելոյ զժամանակ և
առանց մերժելոյ զնոսա՝ միաբանիմք՝ ի հաւատս փո-
խարկութեան. և ասեմք, —

Յաղագս Փոխարկութեան հացին և բաժակին.

Փոխարկութիւն էութեան հացին՝ ի մարմին՝ և

բաժակին յորիւռ, է գերազանց գործ Աստուածային. վասն որոյ կարօտեալ միայն Աստուածային գերազանց գործադիր բանին՝ որ է բանն էական «Լռէք կերէք այս է մարմին իմ... Արբէք ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ...»։ Լոյս վասն այնորիկ ասի Բան էական, զի այն է միայն աննահանջելի գործողութիւն և հրաման Աստուածային կամաց էացուցանել զնորհուրդ սրբոյ Հաղորդութեան՝ ի գործադրութեան Պատարագիչ քահանային՝ ի ձեռս ունելով զնուիրեալն հաց և գինի՝ ըստ դիտաւորութեան Եկեղեցւոյ։ Լոյսպէս ի ստեղծագործութեան անդ վասն աճելոյ և բազմանալոյ մարդկան՝ ասաց Աստուած զբանն էական «Լցեցէք և բազմացարուք...», Ծնունդ. Ա. 28. Նոյնպէս ի փրկագործութեան աստ՝ վասն հաղորդելոյ հինքեան զհաւատացեալս անուան իւրոյ՝ ասաց զբանն էական «Լռէք կերէք. այս է մարմին իմ... Արբէք ի սմանէ ամենեքեան. այս է արիւն իմ...»։ Այն ասաց ի ընուլ զերկիր, իսկ զայս ի ընուլ զերկինս՝ «Աստղի անկելոյց ապատամբողական թշնամւոյն», Հայ։ Նա ծնուցանէ զմարդիկ ի կեանս մահկանացու, իսկ սա յարուցանէ ի կեանս անմահ. նա բընակեցուցանէ յերկրի զմարդ ընդ մարդոյ, սա բընակեցուցանէ յերկինս զմարդ ընդ Աստուծոյ։ Լոյս միայն այս ահաւոր խորհուրդ, այլ և ամենայն խորհուրդք Եկեղեցւոյ ըստ իւրաքանչիւր նիւթոց և գործադրութեանց՝ կարօտին իւրեանց պատշաճաւոր էական բանից որովք կատարին. որպէս և այս ահաւոր խորհուրդ կատարի նովին էական բանիւ, զոր լուաւ սուրբ Եկեղեցի ի վերնատանն խորհրդոյ ի բերանոյ Որդւոյն Աստուծոյ. ուր կից ընդ նմին Աստուածային խորհրդոյն՝ Աստուածային էր և հրաման՝ զայն խորհուրդ հանապազ առնել։ Լոյս որով կարիցէր առնել. ոչ ապաքէն նիւթովքն՝ զոր ետես,

և բանիւն՝ զոր լուաւ. վասն այնորիկ այս ահաւոր խորհուրդ մարդոյ և արքան՝ որպէս անհնար է առանց Աստուածագիր նիւթոյն այնոցիկ լինել. նոյնպէս անհնար է և առանց Աստուածախօս էական բանին փոխարկութիւնն լինել։

Ուստի Բանն էական յասել Քահանային՝ ի ժամ սուրբ Պատարագին՝ ի վերայ հացին և բաժակին, ոչ կարէ համարիլ պատմութիւն այնր ժամանակի փրկագործութեանն Յիսուսի. վասն զի յաղագս նուիրեալ հացին և բաժակին այնորիկ՝ զոր քահանայն առեալ է՝ ի ձեռս իւր, է իսկապէս խորհրդաբար խօսիլ ընդ գործադրիչ Հօր Աստուծոյ՝ գործադրական բանիւ Որդւոյն Աստուծոյ, գործադրութիւն Հոգւոյն Աստուծոյ՝ ի կատարումն խորհրդոյ առաջակայ Աստուածագործութեանն եկեղեցւոյ. զի՝ ի նոցանէն իսկ յասելն զբանն էական՝ կատարեր Յիսուս Հոգւովն սրբով՝ ի սուրբ Աստուածն. ուր անմիջապէս պատուիրեր Եկեղեցւոյ առնել զայն փոխարկութիւն ևս վասն յիշատակի իւրոյ՝ ասելով «Այս արասջիք առ իմոյ յիշատակի». Ղուկ. ԻԲ. 19։ Ուր զոյ արասջիք ասելովն՝ պատուիրեր զայն փոխարկութիւնն իսկապէս առնել. և առ իմոյ յիշատակի ասելովն՝ պատուիրեր զնոյն փոխարկութիւնն միանգամայն և վասն յիշատակի իւրոյ առնել. ուր և ցուցանէր ոչ միայն զնիւթս խորհրդոյն, այլ ուսուցանէր և զբանն էական՝ որով զխորհուրդն արար։ Ուրեմն և՝ ի ժամ սուրբ Պատարագին յասելն էական բանին յաղագս նուիրեալ հացին և բաժակին՝ էանայ մարդն և արքան Քրիստոսի իսկապէս, լինի և յիշատակ նորա ճշմարտապէս. վասն այնորիկ Դպիրքն՝ ի բերանոյ Յոդովրդեանն երգեն ասեն. որ յամենայն ազգս մայր լեզուաց նշանակէ հաւատալ ընդունիլ և ճշմարտութեան իրին վկայել. զոր թէ բուն Հայե-

բէն բացատրելով ասիցեմք, է ասել՝ այն մարմին և արիւն է, խոստովանիմք և հաւատամք։ Եւ ապա սկըսանին զյիշատակ մահուան Որդւոյն Աստուծոյ երբ գել ի դէմս Հօր Աստուծոյ՝ ասելով, "Օրհնիդ քո Աստուած ի մահ վասն մեր պարտապան պարտեաց մերոց"։ Եւ զաշխիին վասն մեր Հայցն կենաց ներկայապէս, ի դէմս Որդւոյն ասելով "Որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հոգ կենաց բաշխիս ի մեզ"։ Եւ զկատարումն խորհրդոյն ի դէմս Հոգւոյն սրբոյ ասելով "Որ զփառակցի քո զխորհուրդ ինչեալ ի յերկնից կատարես ի ձեռս մեր"։ Գանցն յայնժամ լինի Աստուածագործութիւն, որ է Փոխարկութիւն բանիւն Քրիստոսի. միանգամայն և Քահանայագործութիւն՝ որ է վասն Յիշատակի մահուան նորա, ի նոյն վայրկենի՝ երբ էական բանն ասացեալ լինի բերանով Պատարագիչ քահանային ըստ հրամանի Փրկչին թէ "Օ այս արասջիք առ իմոյ յիշատակի"։

Իսկ զնոսա այլ պարտ էր իմանալ զայն այն՝ զորմէ ասէր արարջիք. մի ապաքէն իրրու մատամբ ցուցանէր զխորհուրդն զոր արար, որ է հացն և բաժակն՝ էացուցիչ բանիւն իւրով էացուցեալ մարմին և արիւն իւր կենդանի՝ կենդանարար Հոգւովն սրբով։ Այպա բոլորական իմաստ պատուիրանին Քրիստոսի այսպէս իմացեալ լինի. զհացն և զբաժակն՝ զոր ես այժմ "Առէք կերէք այս է մարմին իմ. Արբէք ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ" ասելով. մարմին և արիւն իմ արարի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց, զոր կերայք և արբէք, յայսմհետէ դուք ես նովին բանիւ իմով զայս խորհուրդ իմ արարջիք՝ — ինչ յիշատակի. զի հանապազ զնս յիշելով և զմահն իմ պատմելով՝ ուտիցէք զմարմին իմ և ըմպիցէք զարիւն իմ ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց. վասն

որոյ և Առաքեալն քարոզէ ասելով. «Գանիցս անգամ թէ ուտիցէք զհաց զայս՝ և զբաժակս ըմպիցէք, զմահն Տեառն պատմիցէք՝ մինչև եկեսցէ նա» Ա. Կոր. ԺԱ. 26։ Իսկ զոր Առաքեալն հաց և բաժակ ասէ, ոչ թէ սոսկ վասն յիշատակի պատարագեալ մասաց ասէ՝ որպէս նորաշնունդք ասեն. այլ զոր փոխարկելով արար Քրիստոս, զայն և՝ վասն յիշատակի իւրոյ առնել պատուիրեաց. Առաքեալն և սոյն օրինակ փոխարկութեամբ լինելով ասէ. քանզի վասն ուտելոյ Հացին և ըմպելոյ Բաժակին այնորիկ խրատէ զվեզ մաքուր լինել ի խղճէ մտաց, և սոսկալի վտանգ ցուցանելով անարժանութեամբ ճաշակողաց՝ ասէ. «Փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա ի հացէ անտի կերիցէ, և ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խորէ զմարմինն Տեառն» Ա. Կոր. ԺԱ. 28, 29։ Իսկ՝ սեմ՝ ոմն կամակոր զրկեալգ ի Մարմնոյ և յԱրինէէն Քրիստոսի. զի չասէ թէ ոչ խորէ զյիշատակն Տեառն, այլ ասէ թէ ոչ խորէ զմարմին Տեառն. վասն զի նոյն է խորհուրդ մարմնոյ և արեան, և նոյն միանգամայն վասն յիշատակի Տեառն։

Իսկ ահա Կաթուղիկէ Եկեղեցին այնու փոխարկիչ զօրութեամբ Աստուածային բանին կատարէ ըստ խորհուրդն ահաւոր. և յետ կատարելոյն՝ Պատարագիչն աղօթելով ի դէմս Հօր՝ ահիւ և դողութեամբ ի վեր առեալ զՊատարագն մատուցանէ նմա ասելով. «Իսկ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»։ Իթէ մատուցեսցն այն չիցէ յայնժամ Էական բանիւն այնուիկ փոխարկեալ ի մարմին և յարիւն Որդւոյն Աստուծոյ, կենդանի պատարագ ընդունելի Հօր. զինքդ մատուցանէ նմա իբրև ըստուերական պատարագն Մելքիսեդեկի քահանային առ հայրն Աբ-

բահամ լոկ հայ և գիրի։ Օրէնք։ Ժ.Զ. 18։ Լայ զի և հանդէսն մեծի պաշտաման, ընծայքն նուիրական, արարողութիւնն խորհրդական, և որ մեծն է և սարսափելի քան զամենեսեան՝ անդ Աստուածախօս բանն էական, յայտնի ցուցանեն և հաւատարմացուցանեն, թէ զոր քահանայն մատուցանէ՝ է անտարակոյս Պատարագ կենդանի՝ մատուցեալ «Ի՛ոստ ամենայնի և յաղագս ամենեցուն»։

Լ՚ոյցես։ Ընդէ՞ր տպա զկնի Էական բանին և ըզ-կնի մատուցման Պատարագին քահանայն անընդհատ աղօթելով առ Հայր՝ մաղթէ առաքել զսուրբ Հոգին, որով արասցէ զհացն ճշմարիտ մարմն և զբաժակն ճշմարիտ արիւն մարմնացեալ բանին։ ոչ ապաքէն արար զայն ընդ ասել քահանային Էական բանի իւրոյ Միածնին։

Պատասխանեմ։ Արդարև անյարմար է այդ ի կարգի մարդկային բանի։ զի մարդ զոր ինչ խորհի խօսի և գործէ, ըստ սահմանի բնութեան ընդ ժամանակաւ խորհի խօսի և գործէ։ և ի սկսանելոյ խորհրդոյն և բանին և գործոյն իւրոյ մինչև ցաւարան ժամանել՝ ժամանակ անցուցանէ։ Ա՚ստն այնորիկ յարեան ոմանք ի Հայոց հռովմէականք, որք հայելով ի վիճակ մարդկային բնութեան, առանց ակնածութեան ի դէպ վարկան փոխել զբառն արարչէ։ ի պատարագամատոյց գիրս իւրեանց՝ և ընթեռնուն արդէր։ որ թէպէտ ի կարգի մարդկօրէն բանի մերում է յարմարաւոր, բայց և ընթեռնուլն արարչէ։ ի կարգի բանից հաւատոյ ըստաշուլ ասուածաբանութեամբ ևս տեսանի յարմարաւոր։ զի այդօրինակ խորհուրդ զԱստուածոյ՝ կամ խօսք ընդ Աստուծոյ։ թէպէտ լինին մարդկային տկար սահմանաւ։ բայց յորժամ լինին միանգամայն և զօրութեամբ հաւատոյ։ յայնժամ առ յԱստուածային

ըստ չափու հաստատ լինել՝ հաստատեալ զմիտս մեր ըստ շնորհաց հաւատոն համբնութեաց առանց աշխատանաց։ Այլ՝ ահա և ես՝ զոր ասեմ, հաւատով ասեմ. յետեւաւորաջնութիւն՝ կամ անցեալ և ապագայութիւն այնր մաղթանաց Պատարագչին՝ չէ ինչ ընդդէմ գործոզութեան Աստուածախօսական բանին, որովհետեւ անցեալքն մեր և ապագայք ներկայ են յԱստուած. վասն այնորիկ եթէ յառաջ քան զԱստուածագործութիւնն և թէ զկնի՝ ներկայապէս ընդունի ընդ Աստուածագործութեան իւրում զքահանայական մաղթանսն զայն՝ ըստ հաւատոյ սուրբ Եկեղեցւոյ. զի և սուրբ Եկեղեցի մեծաւ հաւատով ներկայապէս ընկալեալ համարի զհանդերձեալ փառսն Աստուծոյ՝ որում անդրդուելի յուսով ակն ունի զնա ժառանգել, զի խոստումն յԱստուծոյ է։ Խոստացեալ ինչ պարգև՝ ի մարդկանէ առ մարդիկ՝ չէ պարգև՝ ի ձեռաց հասեալ. այլ որ խոստանայ, տայ միայն ակնկալութիւն իմն ունելոյ զայն՝ ի ժամանակին. բայց եկեղեցին Աստուծոյ զխոստացեալն առ ի յԱստուծոյ՝ մեծաւ հաւատով և հաստատուն յուսով առ իւր ունի, և ընդ այն բերկրի՝ իբր ներկայապէս պարգև ընկալեալ. զոր օրինակ վասն խոստմանն Քրիստոսի՝ Կերպարանակից առնել զմարմին խնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց, այսպէս քարոզէ, «Այսան զի զայս խոստացաւ, զմեծ և զանճառելի շնորհս պարգևել սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս»։ Այսպէս միտ ասէ և Աստուածիմաստ մերս Նարեկացի. «Բռնս խոստումն շնորհ է»։

Արդ՝ Պատարագիչն մարդ գոլով յասելն զԲանն էական ոչ կարէ և զառաքումն Հոգւոյն սրբոյ՝ ի Հօրէ մաղթել միանգամայն. որովհետեւ մարդ ոչ է ամենակալ, զի ամենակալ միայն Աստուած է. որ զա-

մենայն ինչ՝ եթէ անցեալք, եթէ որ կանս, և եթէ հանդերձեալքն, ի միում կէտ ներկայութեան միով հայեցուածով ունի տեսանէ՝ քնէ և ճանաչէ, բը-նաւ և ոչ մի կարօտեալ ժամանակի. քանզի որ ինչ էրն՝ և որ ինչ է՝ և որ ինչ լինելոց է՝ բովանդակա-պէս ի միում ներկայութեան ի նմին ի Աստուած են։ Այս և ոչ է մարդ՝ գունէ իրրև զհրեշտակս երկ-նից, որոց տուեալ է կարողութիւն գյաջողագոյն գի-տելս առ ի Աստուծոյ հեղեալս ի նոսա՝ իմանալ գիտել և ճանաչել ի կէտ հեղմանն յայնմիկ ամե-նայն հանգամանաց. և ի քթթել ական՝ առ բազում մարդիկ պատգամատար լինել. զի են «Օրութիւնք հզօրք ակնարկութեան բարձրելոյն... և ըստ ընթա-ցիկ տեսութեան մասց արագութիւնք»։ Ն-ՐԱ. Ա-բոց՝ ըստ բնաւոր հոգեղէն գոյացութեան և ըստ բանաւոր յարապատրաստ հպատակութեամբ՝ ամենարագ սպասարկութիւնն ի Սարգաբէէն ասա-ցաւ, «Որհնեցէք զՏէր ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ որ առնէք զբան նորա, լսէք ձայնի պատգամաց նորա»։ Ա-Ղ. ՃԲ. 20. որ պարզապէս է ասել՝ թէ երբ զձայն պատգամաց Տեառն լսէք, առանց ժամանակ անցանելոյ՝ նոյն հետայն կա-տարէք ըստ կամաց նորա։ Վասն զի կարող են ի քթթել ական՝ ի ծագաց երկնից մինչև ի ծագս աշ-խարհի հասանել. և ահա այնու արագութեամբ «Հրեշտակ Տեառն յայտնեցաւ զՓիլիպպոս»։ և տարաւ Աղովոսս. զի ի նոյն կէտ յայտնութեանն՝ «Ահ ևս ետես զնա ներքինին»։ Գործ. Ը. 39. և ինքն գտաւ Աղովոսս, որ բազում ասպարիսաք հե-ռի էր ի ջրոյ անտի՝ ուր զներքինին մկրտեաց։

Իսկ թէպէտ մարդն այսպէս մարմնաւոր գոլով տկար է քան զհրեշտակս զօրութեամբ, սակայն ըստ սրուտ հոգեւոր և մտաւոր՝ կարող է ուղիղ Աստուա-

ծարանական վարդապետութեամբ ընդհանրական եկեղեցւոյ զպակասութիւն զորութեան իւրոյ ընուլ հաւատով. զի հաւատն ուղղափառ ըլլասաւոր առնէ զՃրագ մտաց, հաստատէ զյոյս հաւատացելոց, և զորացուցանէ զսիրտս յուսացելոց։ Զնոյն ասեմ և զՊատարագիչ քահանայսն. որ թէպէտ ոչ կարէ զաւէտ կերպն ասելով՝ ուրոյն մաղթանօք միանգամայն հայցել ի Հօրէ և զառաքումն Հոգւոյն սրբոյ՝ որպէս ասացաւ, բայց կարող է յայնմ Աստուածախօսութեան անդ զիւրաքանչիւր ներդործութիւնս հաստատոյ և միասնական սուրբ Երրորդութեան միանգամայն ի միասին հաւատալ, որպէս հաւատայ և ուսուցանէ սուրբ Եկեղեցի. զի Փոխարկութիւն եւ ութեան հայցին և բաժակին է գերազանց հրաշալի Աստուածագործութիւն. և վասն փոխարկելոյ զայն՝ նոյն ինքն Քրիստոս ասէ անդ զբան իւր բերանով քահանային, և գործէ զգործն վերկական ի ձեռս քահանային. և ըստ իւրումն վկայութեան՝ ոչ եթէ յանձնէ ինչ խոսի, այլ Հայրն որ ի նմա բնակեալ է, «Այս գործէ զգործսն։ Յովհ. ԺԴ. 10։ Այսպէս և սուրբ Հոգին որ է ի Հայրէ և յՈրդւոյ՝ գործակից է ընդ նոսին. ըստ որում գործն այն Աստուածային՝ է ներգործութիւն ոչ ի ներքս յԱստուածութեան, այլ ի փոխարկութեան հոգւոյն և բաժակին. ուրեմն նոյն ժամայն ինքնաբերելի կատարէ զխորհուրդ փառակցին իւրոյ՝ և կենդանի առնէ զնա. վասն զի «Հոգին է կենդանարար, մարմին՝ ինչ ոչ օգնէ։ Ա. Դ. Զ. 64։ Որպէս մեկնէ և մերս երանելի Լամբրոնացի ըստ կարգի բանից խորհրդատեսերին զմաղթանս առաքման ի Հօրէ Հոգւոյ կենդանարարին։ Այսպէս ոչ է պարտ յայնմ Աստուածագործութեան մարդկոյրէն ուրոշել զժամանակ. վասն զի գործադրական է յայնժամ բանն էական որպէս ի սուրբ Վերնատան, և

գործադրողն է ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն հաւասագոյ և միասնական. ուրեմն՝ ի ժամանակի յայնմիկ Աստուածամիաս էական բանին՝ իջանէ յերկնից և գործակից սուրբ Հոգին. որպէս ուրեմն մաղթել քահանայն, թէպէտ բանիւն իւրով չեն է հասեալ՝ ի մաղթանան յայն և ասել "Որով զհայս զայս օրհնեալ՝ ճշմարտապէս արասցես մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որով զբաժակս զայս օրհնեալ՝ ճշմարտապէս արասցես արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի"։ Այսն զի քահանայն մարդ գոլով՝ որպէս ասացաւ, մինչև հասանել՝ ի մաղթանան յայն՝ կարօտ է բաւական ժամանակի. որ թէ կարող լինէր գտնել իբրև զհրեշտակս երկնից ամենարագ սպասարկութեամբ՝ յայնմ պահու մաղթել միանգամայն և վասն առաքման Հոգւոյն սրբոյ՝ որոշակի բանիւ ընդ միտս և ընդ բերան, մաղթէր արդեօք՝ ի միասին յաջելն անդ էական բանին. Իսկ ես դարձայց՝ ի կարգ բանի Հաղորդութեան։

Ի՞նչ է՞ն Հաղորդութիւն։

Արդ՝ մեք տեսանեմք աչօք՝ ի վերայ սրբոյ Սեղանոյն հաց և բաժակ՝ նոցին յատկութեամբք. և ճանաչեմք հաւատով մարմին և արիւն՝ Էութեանցն փոխարկութեամբք. Զի՞նչ ապա արժան է մեզ անուանել. զի հայելով զգալի տեսակացն, հաց և բաժակ կոչեմ՝ յէութենէն զարհուրիմք. և հաւատալով Աստուածագործ ճշմարտութեանն, մարմին և արիւն անուանեմ՝ յահէ մեծութեան նորին սարսափիմք. որ միայն քահանային անկ է ասել՝ ի պատարագելն և՝ ի մատակարարելն, մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Օրօրինակ՝ ի հնումն՝ յորժամ քահանայապետն՝ ի Սրբութիւն սրբութեանցն մտանէր, նա մի

ոյն կարդայր ղէական անուանն Աստուծոյ Երրայեցի բարբառով Եհովա . ըստ մերոյս որ էն . իսկ մեք ի զօրութենէ անտի ահաւոր խորհրդոյն առեալ՝ երկիւղածութեամբ կոչեմք Սրբոյ-Սրբոյն կամ սուրբ Հաղորդ-Սրբոյն . զի զօրութիւն նորա է սրբել զմեզ ի մեղաց՝ և հաղորդս առնել մարմնոյ և արեանն Քրիստոսի որ յերկինս է . վասն զի գոյացութիւն այնր հացին և բաժակին՝ բանիւն Քրիստոսի փոխարկեալ է ի մարմին և յարիւն իւր որ յերկինս է . և վասն փոխարկեալ լինելոյն ասացաւ Հաղորդ-Սրբոյն . ըստ որում Առաքեալն ասէ . « Խաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ոչ ապաքէն Հաղորդութիւն է Արեանն Քրիստոսի . Հացն զոր բեկանեմք , ոչ ապաքէն Հաղորդութիւն է Մարմնոյն Քրիստոսի » . Ա . Կրն . Գ . 16 .

Լայլ ես ասասանօր ողբամ զնորաշանդն հերետիկոս . որ ի վերայ այսր Ճշմարիտ Աստուածագործ Հաղորդութեան ընդհանրական Եկեղեցւոյ՝ նախ վասն թերահաւատութեան իւրոյ շուարեալ , և ապա ի յանցս անհաւատութեան բանսարկուին անկեալ . զկեալ ի Ճաշակմանէ մարմնոյ և արեան Փրկչին՝ աւանդ. արտաքոյ եկեղեցւոյ իբր յանծանօթ և յօտար ամայի աշխարհ ի քաղց և ի ծարաւ տակաւին շրջի վարանեալ . Լրդ՝ իսկ թէ յաւուր միում ըստ նմանութեան անառակ որդւոյն՝ ի միտս իւր եկեալ ասիցէ . « Քանի վարձկանք են ի տան հօր իմոյ հացալիցք . և ես ասա՝ սովամահ կորնչիմ . յարուցեալ գնայցիս առ Հայրն իմ . և ասացից ցնա . Հայր՝ մեղայ յերկինս և առաջի քո » . Լուկ . ԺԵ . 17 , 18 . Լրդ այնպէս կատարեալ զղջմամբ և խոստովանութեամբ դարձցի ի տուն հօր իւրոյ ի Կաթուղիկէ յաղագս եկեղեցին Աստուծոյ , ուր արժանասցի զենման Եղբնն պատարակի , և ուտիցէ զմարմին և ըմպիցէ զարիւն նորա՝ առնել կեանս յանձին իւրում . քանզի նոյն ինքն Տէրն

ասէ, «Լեթէ ոչ կերիջիք զմարմն Որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս. Զի մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է»։ Յովհ. Զ. 54. 56։ Լսեա՛ և զայս՝ զի կամակոր զրկեալդ ի Սարմնոյ և Արիւնէն Քրիստոսի. զի չասէ թէ՝ եթէ ոչ կերիջիք և արբջիք զառ յիշատակին Որդւոյ մարդոյ՝ ոչ ունիք կեանս յանձինս, զի առ յիշատակին իմ ճշմարիտ կերակուր և ճշմարիտ ըմպելի է. այլ պարզապէս վասն մարմնոյ և արիւն իւրոյ ասէ՝ թէ ճշմարիտ կերակուր և ճշմարիտ ըմպելի է։ Զոր թէ ուտէ ոք արժանաւորութեամբ, ըստ իւրում քանի՝ նա ի Քրիստոս բնակէ և Քրիստոս ի նմա, զի այն է Հաղորդութիւն. որ է հայն և բաժանի փոխարկեալ ի ձեռն Հոգւոյն սրբոյ յանապական մարմին և յարիւն Քրիստոսի՝ մնալով տեսակ նոցին. և ցոլշափ կայ այն տեսակ հացին և բաժակին, է խակապէս Հաղորդութիւն։ Իսկ ի յեղափոխիլ և յապականիլ ապականացու նիւթեղէն տեսակին, անապականն էութիւն ըստ որում Հաղորդութիւն՝ ոչ յեղափոխի ընդ նմին. այլ ուստի էջն՝ հաւատամբ լինել ի նմին. քանզի նա է «Հացն կենդանի, որ յերկնից իջեալ... Յովհ. Զ. 51. Որ էջն յերկնից Որդին մարդոյ՝ որ էն յերկինս»։ Լնդ. Գ. 13։

Զհուսկն ասեմ. Տեսակ հացին և բաժակին յեղափոխի՝ ըստ որում նիւթ ապականացու. քանզի Աստուածային է սահմանն աննահանջելի, «Զի ամենայն նիւթոյ որ մարմին է՝ ապականութիւն հետեւի»։ բայց փոխարկեալ գոյացութիւնն մնայ անփոփոխ, ըստ որում անապական Հաղորդութիւն՝ առնապական մարմնոյն Քրիստոսի։ Վասն այնորիկ յորժամ ուտեմք և ըմպեմք արժանաւորութեամբ, ապականացու մարմին մեր ընդունի զապականացու տեսակ հացին և բաժակին յորովայն իւր, և անա-

Գ. 38224
ԳՐՔԱՍԻՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐՍԴԱՐԱՆ № 2
ԱՎԱՆԴԱՐԱՆ

պական հոգի մեր ընդունի զանապական գոյացութիւն յեւ թիւն իւր։ Յորմէ հետեւի ասել, թէ փոխարկեալ գոյացութիւնն անապական՝ կայ և մնայ ընդ ապականացու նիւթով հայցին և գիւնայն՝ մինչ չեւ ի կէտ յեղափոխման տեսակաց նոցին. և ի յեղափոխման անդ՝ այն ինչ կորուսանէն զտեսակս իւրեանց, անջատի գոյացութիւնն կենդանի, որպէս ի մեռանիլ մարդոյ՝ հոգի ի մարմնոյ. այլ մինչ չեւ է անջատեալ. ի ճաշակման անդ հաղորդէ զհոգին արժանընկալ։ Խոյց յորժամ պատահէսցի բռնութեամբ ուտել անհաւատից, կամ յանզգուշութենէ ուտել անասնոց, կամ պատահմամբ թափեալ ի վայր դըժուարին՝ ի ջուր կամ ի հուր կորուսանիցի, գոյացութիւնն ըստ որում անկորուստ և անապական՝ առանց ինչ հաղորդելոյ անջատի. և ուստի էջն՝ հաւատաքի նոյն ելանել. «Ի հոց Աստուծոյ է՝ որ ինչանէ յերկնից... Ելանիցէ ուր էր զառաջինն». Յովհ. Զ. ՅՅ. ՅՅ։

Զունիմք ի բնականէն բերել այսմ օրինակ. այլ բաւ մնասցեայ յարմարութեան՝ միայն զայս արեգական։ Խարձ միանգամ խորհրդով քոյին ի հանդիպոյ նորին զոգ և զամենայն մարմին, յայնժամ հասանէ երևակայութիւն քոյ յաներևոյթ յերկիր իմն խաւարային. բայց և անդատին ոչ կարես ուրանալ զարեգակնն ինքնին լուսաւոր։ Նոյնպէս և սուրբ Հաղորդութիւնն ի ճաշակողն ինդրէ զհաւատ սիրով յաջողեալ, որպէս արեգակն զոգ պարդեալ՝ ընդ որ թափանցէ. և զսիրտ մաքուր՝ իբրու մարմին դիմահար՝ յոր ճառագայթէ։ Իսկ եթէ ճաշակողն չունիցի ուղղափառ հաւատս սիրով յաջողեալ, և սիրտ նորա չիցէ խոստովանութեամբ և ապաշխարութիւն մաքրեալ և յարդարեալ, ոչ երբէք զնա հաղորդէ. այլ ի տեսակէ անտի անջատեալ՝ «Ելանիցէ ուր էր

զառաջինն ։ Սակայն անարժանութեամբ ճաշակողն այն պատրաստէ անձին իւրում ահեղ դատաստան. քանզի Աստուծոյն ասէ, ։ Փորձեսցէ մարդ նախ զանձն իւր, և ապա ի հացէ անտի կերիցէ, և ի բաժակէն արբցէ. Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն Տեառն ։ Ա. Կոր. Ժ.Ա. 28, 29։

Յայսցանէ ուշիմք իմաստասիրել, թէ խորհուրդն այն ահաւոր՝ ըստ էութեանն է իմանալի և անփոփոխելի նիւթ հաւատոյ. և ըստ տեսակին՝ զգալի և փոփոխելի նիւթ հաւատոյ. բայց ի յեղափոխիլ ապականացու տեսակին, անապական էութիւնն մնայ միայն նիւթ հաւատոյ։ Ա.Յ.Ս ցորչափ կայ և տեսանի տեսակ նոցին, թէ և ի ճաշակ չիցէ մատուցեալ՝ է ճշմարիտ մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զոր ճաշակեալ՝ հաղորդիմք և լինիմք ընդ Քրիստոսի ի կենդանութեան և ի մեռելութեան մերում միայն հոգւով. և ի յարութեանն հաստատեսցէ՝ միաւորելով փառաւորեալ հոգի մեր ընդ մարմնոյ մերում, և լինիմք ընդ Քրիստոսի՝ փառաւորեալ հոգւով և մարմնով։

Ասացի՝ թէ և ի ճաշակ չիցէ մատուցեալ, է ճշմարիտ կենդանի մարմին և արիւն. Զի են սմանք օտարացեալք յեկեղեցւոյ, և երկայք ըստ սահման այսր ուղղափառ հաւատոյ, ի բազմազգի մոլար վարդապետութիւնս իւրեանց՝ զայն ևս յաւելուն ասել, թէ սրբագործեալ հացն և բաժակ՝ ի կայութեան իւրում է հասարակ հաց և բաժակ. և ի ճաշակելն սուրբք հաւատում ճաշակողին այնմիկ է սուրբ հաց և սուրբ բաժակ. որ է ասել թէ՝ ի տեսանելն աչքն՝ չունի ինչ գերբնական զօրութիւն յինքեան, այլ ի ճաշակելն անդ ստանայ զայն։ Եվ այլանդակ վարդապետութեան. բայց չեն զարմանք, զի այնպիսի օտար

և ինքնահնար հաւատք՝ պատճառեալ լինին ի մոլար կարծեաց. և մոլար կարծիք՝ պատճառեալ լինին ի հայեցուածոյ մարմնական աչքի ի բնականն նիւթեղինութիւն, քան հոգւոյ ակամբ առ գերբնականն Աստուածայնութիւն. սակայն մեզ չէ փոյթ զնոցունց. զի «Մեք չունիմք այնպիսի սովորութիւն, և ոչ եկեղեցիքն Աստուծոյ». Ա. Կորն. ԺԱ. 16.

Արդ խորհուրդն ահաւոր՝ որ կատարի ի մէջ Առաքելական սուրբ Եկեղեցւոյ, է ճշմարիտ մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և է հաղորդութիւն Մարմնոյ և Արեան նորա որ յերկինս է. որպէս Առաքեալն ասէ, «Խաժամն օրհնութեան՝ զոր օրհնեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է Արեանն Քրիստոսի. Հացն՝ զոր բեկանեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է Մարմնոյն Քրիստոսի». Ա. Կորն. Ժ. 16. Ուրեմն «-ՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ՝ որ է ճշմարիտ մարմին և արիւն, հաղորդէ զմեզ Մարմնոյ և Արեանն Քրիստոսի որ յերկինս է. Իսայ ասասնօր ընկղմեն զնս անդունդք և անհնարին խորութիւնք Աստուածային խորհրդոյս. քանզի ի մէջ եկեղեցւոյ՝ ոչ զմեզ հաղորդէ, և յերկինս՝ որոմ զմեզ հաղորդէ. արդ որն և որոմն զնարդ կարիցէ իրապէս և ճշմարտապէս մի և նոյն լինել. այդ ոչ է երկուց զանազան իրաց ընդ միմեանս խառնմամբ միաւորութիւն, այլ որն յեկեղեցի՝ և որոմն ի յերկինս, նոյնանալ էութեամբ միութեամբ ճշմարտութեամբ. ընդ որ ոչ միայն ազգ մարդկան, այլ և վերին զուարթունք սքանչացեալ հիանան աւաւել քան ընդ խորհուրդն Աստուածային մարդեղութեան.

Ի Վերոյ Խորհրդոյ Մարդեղութեան.

Հանգի խորհուրդ մարդեղութեան Որդւոյն

Աստուծոյ՝ է երկուց բնութեանց միաւորութի. զի անձն Բանին Աստուծոյ՝ առեալ զմարդկային բնութիւն ի կուսէն Մարիամայ՝ եղև մարմին. և որպէս յղութիւն մարն էր կուսական, նոյնպէս և ծնունդ Որդւոյն կուսական. զի յղացուցիչ մարն էր Հոգին Աստուծոյ, և ի նմա ծնեալն Որդին Աստուծոյ. որով մարն երանեալ՝ անխախտելի կուսութեամբ եղև Աստուածածին. Քարոզէր Առաքեալն «Օ խոյլելեալն Քրիստոս՝ հրեից գայթակղութիւն, և հեթանոսաց յիմարութիւն». Ա. Կոր. Ա. 23. քարոզէ և Առաքելականն Եկեղեցի զԱստուածածինն միշտ կոչս, թերահաւատից գայթակղութիւն, և նորաղանդից յիմարութիւն. բայց մեզ ուղղափառ հաւատացելոցս զնորին միշտ կուսութիւն՝ «Աստուծոյ զօրութիւն, և Աստուծոյ իմաստութիւն». Անդ. Ա. 24.

Արդ՝ բնութիւնն մարդկային ի կէտ վայրկենի յղացման կուսին՝ այն ինչ անձնաւորիլ էր յարգանգի նորին ըստ իւրում բնական պայմանին. Անձն բանին Աստուծոյ յառաջէաց արդեալ զպայման նորին՝ և ինքն եկաց փոխանակ մարդկային անձին. և այնպէս անձն Աստուածային և բնութիւնն մարդկային՝ անճառելի խառնմամբ ընդ միմեանս միաւորեցան. բայց ոչ խառնակեալ շփոթեցան. զի որ Աստուած է կատարեալ՝ Աստուածային բնութեամբ և կամաք, նոյն մարդ կատարեալ՝ մարդկային բնութեամբ և կամաք. Որպէս և ինքն բազում անգամ ի բանս և ի գործս իւր՝ մերթ միասնաբար, և մերթ որոշակի զերկու բնութիւն և զկամս յինքեան յայտնի ցուցանէր. զի ի գիշերին յորում մատնէր, Աստուածային բնութեամբ և կամաք ասէ Հայր իւր ասէր. «Հայր՝ զբոս եառուրն ինձ, կամիմ՝ զի ուր եմն եմ, և նոքա իցեն ընդ իս». Յովհ. Ժէ. 24. Իսկ յորժամ ի չարչարանացն զերծանիլ կամէր, ասէր մարդկայնովն կամէր և

ասէր. «Հայր՝ եթէ կամիս՝ անցո՛ զբաժակս զայս յիս. Բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին». Ղ։Գ։ԻԲ. 42։ Նոր մերթ Աստուածային միանդամայն և մարդկային բնութեամբ և կամքք բաղում գործս ցուցանէր. և այն զի ասէր. «Հուր եկի արկանել յերկիր. և զինչ կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր». Ղ։Գ։ԺԲ. 49։

Արդ՝ լուիցեն ընտանի թշնամիք մեր և զղջացին ընդ բարուբանս խրեանց, զի մեք խոստովանիմք և հաւատամք զմարդացեալ բանն Աստուած՝ մի անձն մի դէմ. և վասն անշփոթ խառնմանն Աստուածային անձին ընդ մարդկային բնութեան, ասեմք յերկուց բնութեանց միաւորեալ մի բնութիւն։ Նոր մի բնութիւն ասելով՝ կամիմք մի անձն ասել ընդդէմ Ղեսատրի, որ չարաչար վարդապետութեամբ երկու բնութիւն ասելով զմի Քրիստոսն յերկուս անձինս ոտրէր. զոր տիեզերական ժողովն Եփեսոսի դատապարտեալ նզովեաց։ Իսկ յերկուց բնութեանց միաւորեալ ասելով՝ կամիմք անշփոթ խառնումն ցուցանել ընդդէմ Եւտիքեայ, որ մի բնութիւն ասելով՝ չարաչար մոլորութեամբ շփոթեալ խառնակ դաւանէր. այն ևս տիեզերական ժողովով քանիցս անգամ դատապարտեալ նզովեցաւ։ Սակայն ուր չիցէ ինչ կասկած՝ ոչ Ղեստորական և ոչ Եւտիքական հաւատակութեանց, առ հասարակ միամտաբար ասեմք՝ Քրիստոս է Աստուած մարդացեալ։

Ի՞ՆՉԵՒ Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՂՈՐԴԵՒՆ։

Բայց խորհուրդն ահաւոր՝ զի հաղորդեալ զի՞նչ հաղորդեալ, չէ՛ երկուց իրաց միաւորութիւն. այլ զի՞նչ առ զի՞նն փոխարկեալ լինելով որպէս ասացաք՝ նոյնանալ էութեամբ միութեամբ և ճշմարտութեամբ։ Հապա լուիցեն յայսմիկ լեզուք գիտուն ճարտասան

Նից, և անկեան գրիչք ի ձեռաց խմաստուն դպրաց. ծն եկայք խնդրեսցուք ի Սերովբէից և ի Քերովբէից անտի զորպէսն իմանալ. զի որք հանապազ տեսանեն զերեսս Աստուծոյ, արժան թէ գիտասցեն նոքա՝ Թերևս և մեզ յայտնեսցեն։

Ո՞վ Սերովբէք և Քերովբէք գերաշխարհիկ իմաստունք, «Որ կայք միշտ առաջի Աստուածութեան», աղաչեմք զձեզ՝ զի առանց խնայելոյ յայտնեսջիք մեզ։ Այլ ահա նոքին իսկ ևս անհաս գոլով այսմ ահաւոր խորհրդոյ, վիպեն լինել անքննելի և անճառելի. վասն այնորիկ վերին Թեւոքն ծածկեն զդէմս իւրեանց՝ իբրու թէ ոչ կարեմք ամենևին յայդ ի խորս ընթանալ։ Այլ միոյն միջին թեւոքն հաւասայ թռուցեալ՝ ի ժամու Աստուածագործութեանն միաբան ազաղակեն և ասեն «Սուրբ սուրբ սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառաք քո, օրհնութիւն ի բարձունս»։

Ծածկեսցեն ուրեմն և զդէմս իմ թեւք հողեղինիս, զի պատկառանք անհնարինք անկան զերեսաքս իմովք. զի յաղագս մեծի յանդգնութեան իմոյ առ ի գիտել զանգիտելին և նոցին իսկ հրեշտակաց, աւասիկ Առաքեալն անդուստ ի վերուստ զայրագին ակամբ առ իս հայեցեալ ասէ. «Խարուք ընթանայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել»։ Գալ. Ե. 7։

Այն յանդիմանութիւն Առաքելոյն գրեցաւ առաւել ևս վասն իմ, և ծանրացաւ ի վերայ իմ առաւել քան զքար՝ և դժուարաբառնալի քան զաւազ. զի այսպէս եղև ինձ իմանալ, ով լիմաք՝ ընդէր խոտորեցար ի լուսաւոր արահետ շաւղաց սուրբ Եկեղեցւոյ, մինչ ուներիր քեզ ուղեցոյց զմեծապայծառ զլոյս հաւատոյ, և միամիտ սրտիւ թեթև ընդ

թանայիր 'ի վերայ այդորիկ ծովու Աստուածային խո-
րին խորհրդոյ։ Որդ՝ զնարդ շնչեաց 'ի քեզ յանկարծ
հողմն վայրահակ մտաց մարդկայնոյ, որով երկմտեալ
ծանրացար և սկսար ընկղմիլ. այլ մինչև ընկղմեալ
իցես գլխովին և կորուսեալ, վերայն փութով զձե-
ռըս քո առ Փրկիչն Յիսուս՝ և աղաղակեա ընդ Պետ-
րոսի ասելով «Տէր փրկեա զիս», Մատթ. Ի. 30.
զի և նա ձգեալ զձեռն ողորմութեան իւրոյ փրկեսցէ,
և դարձեալ հաստատեսցէ զքեզ 'ի հաւատս
սուրբ Եկեղեցւոյ։ Որոյ մի այլ ևս մարդկային դատ-
մամբդ մատիցես 'ի քննութիւն անիմանալի խորհրդ-
ոյն Աստուծոյ, և կորուսանիցես զանձն քո 'ի զուր.
վասն զի քննութիւն խորոյն Աստուծոյ՝ գոր է յա-
տուկ Հոգւոյն սրբոյ. այլ դու «Ինչպէս հաւատամ» և
կեցցես», Հռ. Ը. 30. և արժանի ընդիցիս հաղորդ-
իլ Մարմնոյ և Արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի։ «Օ՛ի ես ընկալայ 'ի Տեառնէ, զոր և ձեզն
աւանդեցի, եթէ Տէր Յիսուս 'ի գիշերին յորում մատն-
էր, առ հաց. Գոհացաւ. եբեկ և ասէ. Այս է մարմին իմ... Նոյնպէս և զբաժակն յետ
ընթրեցին, առ և ասէ. Այս բաժակ նոր ուխտ է
իմով արեամբ», Ա. Կորն. Ժ.Ա. 23—25. որ և պատ-
ուիրեաց եկեղեցւոյ իւրոյ առնել զայն Աստուածա-
գործ փոխարկութեանն խորհուրդ՝ ասելով «Օ՛այս
արարջիք առ իմոյ յիշատակի», Լուկ. ընդ էր պատուիր-
եաց առնել. վասն զի ըստ ամենառատ մարդասի-
րութեան իւրում կամեցաւ, զի մինչև 'ի կատարած
աշխարհի եղիցի միշտ ընդ մեզ յերկրի՝ ճշմարիտ
Մարմնով և Արեամբն իւրով. զի և մեք 'ի նոյն հա-
ղորդեալք՝ եղիցուք ընդ իւր յերկինս հոգւով. և
'ի կատարածի աշխարհիս՝ մինչև յաւիտեան լինել
ընդ նմա հոգւով և մարմնով։

Այս հոգեխրատ յանդիմանութիւն սրբազան

Առաքելոյն Թափանցեաց առ իս մինչև 'ի յոգի. վասն որոյ Թողեալ զվայրն անբոյս վայրենամիտ խորհրդոյս, անդրէն կալայ զուսաշաւիղ հետս հաւատոյ Առաքելական սուրբ Եկեղեցւոյ. որով ահաւասիկ տեսանեմ զՔրիստոս Ճշմարտապէս 'ի մէջ եկեղեցւոյ, որ հանապազ պատարագեալ մատչի վասն մեզոյ մերոց անմեղ Գառն Աստուծոյ։ Այս և տեսանեմ նովին հաւատով զՀոգին Ճշմարտութեան զառաքեցեալն 'ի Հօրէ յաւուր մեծի Պենտեկոստէի' լիակատար շնորհօք բնակեալ ընդ եկեղեցւոյ։ Իր եթէ չէր ընկալեալ եկեղեցի զՀոգին սուրբ, և չունէր հանապազ ընդ իւր բնակեալ, անհաւատալի էր՝ յայնմիկ հայն և գինին փոխարկութեամբ լինել կենդանի մարմին և արիւն Յիսուսի Փրկչին. այլ թերևս լինէր օրպէս 'ի ժողովս նորադանդից՝ հաց և գինի անկենդան, վասն որոյ և անընդունելի յիշատակ. քանզի ոչ լինէր մարմին և արիւն Քրիստոսի, և մեզ Ճշմարիտ կերակուր և Ճշմարիտ ըմպելի։ Այսն այնորիկ ժողովուրդք նոցին մի երբէք ակնկալցին բնակիլ 'ի Քրիստոս՝ և Քրիստոս 'ի նոսին, զի ոչ ուտեն զմարմին և ոչ ըմպեն զարիւն նորա՝ որ պակասեալ է 'ի նոսա. վասն զի ոչ ընդունին զսուրբ Հոգին բնակիլ 'ի ժողովս իւրեանց, որ փոխարկեսցէ զհացն և զգինին 'ի Ճշմարիտ մարմին և յարիւն իւրոյ Էակցին։ Զունին նա և զօրինաւոր քահանայս անընդմիջաբար Առաքելական յաջորդութեամբ ձեռնադրեալս՝ և կարգեալս 'ի սպասաւորութիւն Աստուածային խորհրդոյն եկեղեցւոյ. վասն զի կամակորութեամբ իւրեանց անջատեցան 'ի հոգեբնակ Առաքելական եկեղեցւոյ, և զրկեցան 'ի Հաղորդութենէ Ճշմարիտ մարմնոյ և արիւն Որդւոյն Աստուծոյ։

Իսկ կաթուղիկէ եկեղեցի՝ յօրէ անտի մեծի Պենտեկոստէի' անընդմիջաբար ունի զսուրբ Հոգին լիակատար շնորհօք ընդ իւր բնակեալ. ուստի անա-

ընդմիջաբար ունի և զլիակատար իշխանութիւն քահանայական պաշտօնէութեան՝ առ ի լինել սպասաւոր Աստուածային խորհրդոյն, և ասել ի բերանոյ հեղինակի այնր խորհրդոյ երկնաւոր քահանայապետին «Լուէք կերէք այս է մարմին իմ... Արբէք ի սըմանէ ամենեքեան այս է արիւն իմ», որով փոխարկեալ լինի Հաշտարար կենդանի մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ՝ որ յերկինս է։ Ուրեմն Քրիստոս՝ յերկինս մարմնովն իւրով ընդ աջմէ Հօր, է և նովին մարմնովն Հաղորդութեամբ ընդ մեզ յերկրի մինչև ի կատարած աշխարհի. զի եթէ ոչ լիներ հանապազ ի մէջ եկեղեցւոյ մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ, անտարակոյս ասեմ՝ զի և նա ոչ լիներ ընդ եկեղեցւոյ՝ որպէս ասացն, «Զամենայն աւուրս՝ մինչև ի կատարած աշխարհի». Մատթ. ԻԸ. 20։

Իսկ ի վերայ այսր լիակատար իշխանութեան եկեղեցւոյ՝ տեսին երկինք նա և դերօրինակ Աստուածական մեծափառութիւն եկեղեցւոյ. զի Աստուածատուր քահանայական իշխանութեամբն այնուիկ՝ սպասաւորելով Աստուածագործ խորհրդոյն այնմիկ, ոչ միայն առնէ զայն վասն յիշատակի անճառելի տընօրէնութեան և խոնարհութեան Բանին Աստուծոյ, այլ և ուտելով և ըմպելով զայն Աստուածախառն մարմին և արիւն նորա՝ նովին Հաղորդութեամբ և մարդն աստուածանայ։ Զհա լուսն ցանկութեան նախասահմանեցին Ադամայ, որ ուտելով ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի՝ կամէր անդէն աստուածանալ. իսկ այժմ տեսանեն երկինք զԱստուած մարդացեալ, և ի նմանէ Աստուածական մեծափառութիւն շնորհեցեալ իւրումն եկեղեցւոյ. զի որ էառ զմարմին մեր մահկանացու ըստ մարդկութեան, ետ փոխանակ զայն մարմին իւր խառն ընդ իւրում անմահ Աստուածութեան։ «Ո՛վ մեծի տուր և առութեան».

Լամբ. Սրդ. որ եղև ընդ երկնաւոր վաճառականին. զի մարդիկ ետուն Բանին Աստուծոյ սուկ մարդկային մարմին և արիւն մահկանացու, և առին ի նմանէ Աստուածախառն մարմին և արիւն կենարարութիւն անմահական։ Եւ զայն ընտրելագոյն շահեկանութիւն յայնժամ ստացաւ եկեղեցին, յորժամ Տէրն փառաց թաղմեալ յԸնթրիս խորհրդոյ՝ քաշեաց նմա զմարմին իւր և զարիւն ուտել և ըմպել, և զայն պատուիրեաց վասն ուտելոյ և ըմպելոյ հանապազ առնել, և վասն յիշատակի իւրոյ առնել։

Արդ՝ խորհուրդն այն ահաւոր՝ ըստ որում վասն յիշատակի մահուանն Քրիստոսի, է Քահանայապետութիւն. որ հոգենուագ ընտիրցանութեամբ և խորհրդաւոր արարողութեամբ կատարի բանիւ Եկեղեցւոյ ի ձեռն քահանային։ Իսկ ըստ որում ի մարմին և յարիւն փոխարկութիւն է Աստուածագործութիւն, որ կատարի յատկապէս բանիւն Աստուծոյ ի ձեռս քահանային։ Զոր եկեղեցին ուտէ և ըմպէ ունել կենաս յանձին իւրում. քանզի ասաց Տէրն. «Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կենաս յանձինս» (Յովհ. Զ. 54. վասն այնորիկ պատուիրեաց ասելով «Զայս արասջիք առ իմոյ յիշատակի»։

Լսէր դու ևս միւսանգամ, զի ոչ պատուիրեաց այնպէս առնել, այլ՝ զայն առնել. զի զոր ինքն արար, ոչ եթէ իբրև օրինակ ցուցանէր իւրուսն եկեղեցւոյ, որպէս յետ լուսնալոյն զոսա աշակերտաց իւրոց՝ պատուիրեաց նոցա և ասէ, «Օրինակ մի ետուս ես ձեզ, զի որպէս ես արարի՝ և դուք առնիջիք»։ (Յովհ. ԺԳ. 15։ Այսն որոյ և մեք առնեմք ի մէջ եկեղեցւոյ ի յիշատակ ծայրագոյն խնարհութեան Նորա. բայց զխորհուրդ Մարմնոյ և Արեան իւրոյ զոր արար՝ և պատուիրեաց առնել, ոչ թէ ըստ նմանուա-

թեանն սոսկ առ 'ի յիշատակ, այլ իսկապէս ըստ առ-նել. վասն այնորիկ չասաց թէ այսպէս արասջիք, այլ թէ՝ ըստ արասջիք։ Զ'ի եթէ ասացեալ էր այսպէս՝ ա-րասջիք, թերեւս օրինակ լինէր այն. և ասել. Զայս՝ օրի-նակ եւտու ձեզ, զի և դուք ըստ նմանութեան սմին արասջիք առ իմոյ յիշատակի. և այնպէս Պատարագն եկեղեցւոյ ոչ լինէր փոխարկութեամբ Ճշմարիտ Մար-մին և արիւն Որդւոյն Աստուծոյ, այլ լինէր ըստ ան-վաւեր արարողութեան աղանդաւորաց՝ զուրկ 'ի Հա-ղորդութենէ՝ սոսկ յիշատակ։ Զայս ասելովն ըստ ա-րասջիք, յայտնի կամեցաւ ասել թէ՝ Զայս Մարմին և զա-րիւն իմ զոր արարի, և զոր կերայք և արբիք, արասջիք և դուք ուտել և ըմպել. որով և «Յիշատակ իմ առնիցէք մինչև եկիցէ ես միւսանգամ». Շարք։

Լու ահա ըստ այնմ Աստուածային պատուիրանին պաշտե եկեղեցի սուրբ զխորհուրդն ահաւոր, որ կատարի Հոգւով սրբով 'ի ձեռս քահանային. զի չէ քահանայն տիրապէս կատարիչ այնր խորհրդոյ, այլ՝ սպասաւոր խորհրդոյն կարգեալ 'ի Քրիստոսէ, զի փա-խանորդաբար ասասցէ զՔանն էական։ Վասն զի Քրիստոս է որ տիրապէս փոխարկէ զՀացն 'ի Մարմին և զգաժակն յարիւն իւր՝ գործակցութեամբ Համագոյակից Հոգւոյ կենդանարարին. անդ երևութաբար ինքն ինքն էութեամբ։ Վասն այնորիկ յառաջ քան զփո-խարկութիւնն գեղեցիկ խորհրդով երգեմք ասելով, «Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ. որ էին Աստուած ստա բազմեցաւ». զի յանուն նորա ժողովեալ Ող-ջունեմք զմիմեանս 'ի համբոյր սիրոյ և խաղաղութեան, որով յայտնեալ լինի Քրիստոս 'ի միջի մերում, անե-րևութապէս բազմեալ 'ի վերայ սրբոյ Սեղանոյն՝ առ 'ի կատարել զառաջակայ զխորհուրդ սուրբ Հաղոր-դութեան. զի Քրիստոս մատուցանէ անդ Պատա-

բաց, և «Պատարագ Քրիստոս մատչի Գառն Աստուծոյ»։ Իսայ ոբք «Զանձինս առ իմաստուն ունէին»։ Հռովմ. Ա. 22. յայնմիկ և ուղիղ համարեցան ընթեռնուլ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեսցի, որ էնն Աստուած աստ բազմեսցի»։ Իւ ոչ միայն ի պատարագամատոյց գիրս համարձակեցան, այլ և դպրոցական վարդապետք նոցին՝ զբանս ոմանս հոգեւնուագ Հարականին փոփոխել յանդգնեցան. որոց եթէ չէր այլով իւիք հասեալ ի վերայ հայր ոմն աստուածաբան, փոքր մի ևս զՀարականն առնէին իրրև զխեղճապատակս իւրեանց՝ անարգ խառնարան. այլ մեք զոր ի նախնի Հարցն սրբոց սրպէս ընկալաք, պարծիմք զնոյն մինչև ի վախճան անփոփոխ՝ և առանց ինչ յաւելլոյ կամ յապաւելոյ ունել։

Ահեծ են այս պարծանք արդարև Հայաստանեաց եկեղեցւոյ, որ ոչ յանձն առնու երբեք՝ թէ և ողջամիտ և ուղիղ վարդապետութեամբ՝ յաւելուլ զմասնիկն այն Լատինաց ի Նիկիական հանդանակին. զի շատ է յաղօթամատոյց գիրս և յեկեղեցական երգաբանութիւնս իւր համաձայն ընդհանրական եկեղեցւոյ գառանիլ զսուրբ Հոգին՝ «Հոգի Հօր և Որդւոյ». զի ուսեալ է ի սրբոյ Լուսաւորչէն իւրմէ զայն բարձրագոյն աստուածաբանութիւն, «Հայր յանձնէ՝ Որդի ի Հօրէ՝ Հոգին սուրբ ի նոցուանց եութենէ». և ուրեք նաև «Ի նոցուանց և ի նասին»։ Իւ առ պարզութիւն բանիս գեղեցիկ է օրինակն՝ զոր ցուցանէ մերս Շնորհալին ի գիրս Յիսուս որդին, և ըստ նմին օրինակի ունիմք զմիտս մեր իբրև ջուր մաքուր և պայծառ՝ հանդէպ Երբեակ և մի անբաժանելի լուսոյն Աստուածութեան. արդ հաւատամք. զի Հայրն լոյս՝ ի ջուր ծագեալ. և լոյս Որդին՝ ի Հօրէն լուսոյ Ճառագայթ ներգործեալ. և լոյս Հո-

գին որ ի Հօրէ ելանէ՝ ի ճառագայթէ անտի ծաւալ առեալ. վասն այնորիկ երգէ մերս Եկեղեցի, «Լոյն և Նման Հօր և Որդւոյ, Հոգիդ անեղ և համագոյ. բղխումն Հօր անքննաբար, առող ՅՈրդւոյ անճառաբար». Հայր. այլ մի երկարելով և մեք լիցուք ժամավաճառ, դարձցուք վաղվաղակի ի նըպատակ մեր։

Արդ՝ լուաք, զի Աստուածագործութիւնն այն ի սուրբ Վերնատան՝ չէր օրինական, և ոչ փոխաբրինական կամ վարկողական. քանզի ոչ ասաց Քրիստոս՝ թէ զայս հաց կերէք, և զայս բաժակ արբէք փոխանակ Պարմեոյ և Արեան իմոյ. կամ թէ այս հաց և բաժակ համարեսցի ձեզ իբրև մարմին և արիւն իմ։ Այսր որում յետ ընթեղեղին՝ յորժամ մարդիկն չէին սովոր տակաւին զմիս ուտել, այլ պտղովք և բուսովք կերակրէին, հրաման ետ Տէր ուտել զմիս առնասնոց սրբոց առանց խղճի։ վասն որոյ ասէր՝ «Իբրև զբանջար խոտոյ ետուաք ձեզ զամենայն». Ծննդ. Թ. 3. յայնմհետէ սկսան ուտել զմիս առանց խղճի՝ որպէս ուտէին զբերս երկրի. և ոչ թէ միսն եղև նոցա խկպտիս բանջար խոտոյ։ Այլ ի Վերնատանն խօսիցիս՝ ոչ եղև այնպէս. զի այն ինչ ասաց Յիսուս վասն Հացին՝ թէ այս է մարմին իմ, և վասն Բաժակին՝ թէ այս է արիւն իմ, ոչ մնաց տեղի ինչ վարկման կամ փոխանակի. այլ եղև ճշմարիտ մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յորժամ տեսանէին Հրէայք՝ զի ի ձեռն Յիսուսի խուլն լսէր և համրն խօսէր, զարմացեալ ասէին թէ «Այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք». Մարկ. Բ. 12. և եթէ մեծ հրաշք են առաջի մարդկան՝ խլից լսել և համրոյ խօսիլ, իսկ այս անլուր և անօրինակ հրաշագործութիւն, այն է՝ Հացն և Գի-

նին ՀՀմարտապէս կենդանի մարմն և արիւն լինել՝ զինչ երևեսցի։

Ասնկայր Մովսէս գիտել զանուանն Աստուծոյ, պատճառէր զհարցումն ժողովրդեան Իսրայէլի և ասէր. «Հարցանիցեն զիս՝ թէ զինչ է անուն նորա. զինչ ասացիս ցնոսա. Եւ ասէ Աստուած ցՄովսէս. ես եմ Աստուած որ էի»։ Լրբ. Գ. 13, 14։ Անուն անսահմանելի. Անուն ահաւոր և անասելի ընդ բերան ժողովրդեան հնոյն Իսրայէլի. բայց ի մեզ՝ Անուն Աստուծոյ մարդացելոյ և ընդ մարդկան բնակեցելոյ՝ օրհնաբանեալ ընդ բերան ժողովրդեան նորոյս Իսրայէլի։ Ով ամենառատ մարդասիրութեան. քանզի որ էն վերանստեալ ի քառակերպեան հրաշնիւթ ի յաթոռ փառաց, ի հինգերորդումս աւուր մեծի եօթնեկին՝ ընդ աշակերտսն բազմեալ ի սեղան խորհրդոյ, առեալ ի ձեռս հաց և բաժակ՝ էական բանիւն իւրով փոխարկէ և փրկութիւն հրաշագործէ. որում ցանկայր ի սկզբանէ. քանզի ասէր, «Ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչ չէ չարչարեալ իցեմ»։ Լուկ. ԻԲ. 15։

Արդ՝ որոյ Անուանն էական անքուբ և անսահմանելի, նորին և յայս խորհուրդ բանն էական՝ անքուբ և անճառելի. զի ոչ ոք ի յաւիտենից կոչեցաւ որ էն, բայց միայն Աստուած. և ոչ սիրտ ուրուք խորհեցաւ կազմել այսպէս անօրինակ սեղան խորհրդոյ, բայց միայն որ էն Աստուած. վասն զի աշակերտաց իւրոց ՀՀց մատուցանէ՝ և ասէ թէ մարմին իմ է. Բաժակ մատուցանէ՝ և ասէ թէ արիւն իմ է։ Լու զիարդ կարէր լինել, և կամ զիարդ կարէ նոյնն հանապազ լինել. վասն զի Աստուած է գործողն, Աստուածային է գործն, և Աստուածապէս գործողութիւնն, զոր յառաջ խոստացաւ ի ժողովրդեանն մինչ ուսուցա-

ՆԵՐ 'Ի ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄ. ՈՒՐ ԱՍԷՐ ԹԷ՝ « Հացն զոր ես տաց՝ մարմին իմ է ». Յովհ. Զ. 52։

Տես՝ թէ խոստմամբն այն որ 'Ի Կապառնայում, ոչպէս հաստատէ զհաւատս մեր 'Ի խորհուրդն աւանաւոր. զի վասն հացին ասէր թէ՝ « Զոր ես տաց », և ոչ ասէր թէ տամ. զի չէր անդանօր ներկայապէս հաց 'Ի ձեռս առեալ. այլ զոր կամէր տալ յետ սակաւուց, զայն խոստանայր։ Իբրու կամէր ասել թէ՝ 'Ի ժամանակի յորժամ բաղմիցիմ յԸնթրիս խորհրդոյ իմոյ, անդ տալոց եմ զՀացն զայն. վասն այնորիկ ասէր « Հացն զոր ես տաց », իսկ վասն էուխեան խորհրդոյն որ է մարմին իւր, զայն ներկայապէս ցուցանէր յասելն « Մարմին իմ է ». վասն զի որ էն Մարմին եղեալ, այն իսկ էր ներկայապէս « Հացն կենդանի, որ յերկնից իջեալ ». Յովհ. Զ. 52։

Լսիցես. ապաքէն մարմին Քրիստոսի հաց էր ուտելի և արիւն բաժակ ըմպելի։ Պատասխանեմ. որպէս 'Ի վերս անդր ցուցաւ 'Ի բանի Փոխարկութեան, նոյնն իսկ և յայսմիկ բանի էուխեան. զի ոչ նմանութեամբ ինչ կամ յարմարութեամբ փոխանակ հացին կերակրոյ և բաժակին ըմպելոյ, այլ ճշմարիտ կերակուր և ճշմարիտ ըմպելի. որպէս ինքն ասէ, « Զի մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է ». Ես. Զ. 56. զորմէ ճշմարիտ ասելով՝ 'Ի նմանութենէ կամ 'Ի փոխանակութենէ ամենեին անման և անբաժին ցուցանէ։

Թերևս այնդիսի նորազանդն՝ զայդ ինձ յայլաբանական միտս իմանալ ըստ հակառակ ոգւոց իւրեանց. բերեալ ընդ առաջ՝ թէ այլ ուրեք ասէ Յիսուս զանձնէ իւրմէ « Ես եմ որթն ճշմարիտ՝ և Հայր իմ մշակն ». Յովհ. Ժե. 1. որ թէպէտ ճշմարիտ որթն եմ՝ ասէ, բայց պարտ է յայլաբանական միտս իմանալ։ Պատասխանեմ. յայսմիկ ճշմարիտն ասա-

ցեալ՝ տեսանի միայն զնիւթոյն. որ է սրթն նմանութեամբ առեալ. որ չէ կարգեալ ի կիրառութիւն ուսելոյ կամ ըմպելոյ։ Ա.Յ.Լ ի Հաղբրդութեան՝ և յառաջին մասին և՛ յերկրորդ մասին՝ Ճշմարիտն իմացեալ լինի ի վերայ նիւթոյ և կիրառութեանց նոցին. որպէս թէ ասէր, Մարմն իմ է Ճշմարիտ հաց՝ որ ձեզ Ճշմարիտ կերակուր. և արիւն իմ Ճշմարիտ բաժակ՝ որ ձեզ Ճշմարիտ ըմպելի. նա մանաւանդ՝ յայտ է այն լինել նմանութիւն ի բանից անտի, զոր Յիսուս յարէ զինի՝ ասելով աշակերտաց իւրոց, «Այս եմ սրթ՝ և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ ».Յովհ.Ժե.5։ Արդ՝ որպէս ըստ յարմարութեան բանին իւրոյ զՀայր իւր մշակ անուանէ՝ և զաշակերտսն ուռ, նոյնպէս և զինքն յարմարութեամբ սրթ անուանէ. ուր Ճշմարիտն ասելով՝ զհոգեկերպոյ վարդապետութիւնս իւր ի ձեռն աշակերտաց իւրոց յոյժ արգասաւոր լինել ցուցանէ։ Սակայն ի խորհուրդ սրբոյ Հաղբրդութեան՝ որպէս Հացն և Բաժակ՝ Էական բանիւն է գոյացաւոր Մարմն և արիւն իւր, Ճշմարիտ կերակուր՝ և Ճշմարիտ ըմպելի, նոյնպէս և Էական բանիւն իւրով Մարմն և արիւն իւր հաղբրդաբար Ճշմարիտ կերակուր՝ և Ճշմարիտ ըմպելի. վասն որոյ ասէր, «Օ՛ի Մարմն իմ՝ Ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝ Ճշմարիտ ըմպելի է ».Յովհ.Զ.56։

Ի՞նչէ, Քրիստոս ի հաց փոխարկեալ։ Զատուաւ ծարանութիւնն հոգեւորաբար՝ ուսուցանէ զլերանն ուղղափառ խոստովանիլ համարձակաբար՝ թէ Քրիստոս է հաց կենդանի և կենդանարար. զի և Թադէոս Սաղմոս Մելքիսեդեկ քահանայ յընծայել անդ Աբրահամու հօրն հաւատոյ՝ անդուստ ի հեռուստ ամոյ անտի՝ հացիւն և գինեաւն այնուիկ զոյս Ճշմարտութիւնն ցուցանէր, Ծննդ.Ժդ.18։

նա և մարդաբէքն սեռանեռով զայս՝ ընդ սեռական Աստաւածութեան հացին խորհրդաբար գուշակեին։ Իւ ընդ էր և ինձ վասն ճշմարտութեան այսորիկ ընդ հեռաւորս շրջիլ սատանիլ. ցէրն մեր յայնժամ ՅՈՒՆԹ-ՐԻՍ խորհրդոյն իւրոյ՝ սրով բանիւ փոխաբերեաց ըզ-հացն ի մարմին իւր. «Ոչ ապաքէն այս է մարմին իմ սաեւլով. և ահա նոյն Լսական բան էր անդրադարձաբար՝ զոր յաւաղն ասաց ի Կափառնայում, «Ես եմ հացն կենաց», Յովհ. Զ. 48. որ ոչ բան սեռութեանն սեռական Մարմնոյ և Աբեան իւրոյ, և ոչ բան սեռութեանն սեռական Հացին և Բաժակին, այլ բան էութեանն անճառելի խորհրդոյն՝ Քրիստոս Աստուած է ճշմարիտ Հաց կենդանի, և հաց և բաժակն Աստուածագործեալ՝ ճշմարիտ մարմին և արիւն կենդանի. վասն զի զորս Թիւն Աստուածախօս բանին այնոքիկ՝ ոչ միայն ի կողմանէ սասի դոյացութեան հացին և բաժակին առ մարմին և յարիւն Քրիստոսի հաւասարեալ սեռանի, այլ և ի կողմանէ անսի անճառելի Հաղորդութեան Մարմնոյ և Աբեան նոցա՝ առ հաց և ի բաժակն Աստուածագործեալ։

Այս խոստովանութիւն ուղղափառաց՝ է դիտակ սքանչելի. որպ յերկուց ծայրից և ի եթէ հայեցցիս լուսաւոր հաւատոյ ակամբ. մինչդէս մերձեցուցանէ սեռոզութեան քոյ զերկնչի հեռաւոր նպատակին. և յայտնապէս ցուցանէ՝ թէ Քրիստոսն Յիսուս որ յերկինս ընդ աջմէ Հօր՝ նոյն ինքն Աստուածագործ փոխաբերութեամբ անճառելի խորհրդոյն իւրոյ՝ է և ընդ մեզ Կաթուղիկէ եկեղեցւոյ. «Որ մնասուցեալ միշտ՝ և անպակաս մնայ ի լրութեան, յարաբակ զենեալ ի սպանդարանի անեթիւ սեղանոց անարատութեամբ, բոլորս յամենեսին՝ և բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս՝ և խակութեամբ ի սաղրինս, անմնաց մարդկութեամբ՝ և անեթերի Աստուածաս-

թեամբ. փշրեալ և բաշխի ՝ի մատունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ ՝ի նոյն մարմին իւրում գրեալ զոր. Նար. խէ։

Յայս ասասուածխմաստ մերս Նարեկեան սրբազնուէր աղօթից՝ դիւրաբաց բացատրի դաւանութիւն եկեղեցւոյ ՝ի սքանչելի խորհուրդ սրբոյ Հաղորդութեան. զի Տէրն մեր՝ որ յերկինս յամենայն իւրում, նոյն ինքն ՝ի Տաճար սուրբ իւրում միշտ պատարագի անսպառութեամբ. և յիւրաքանչիւր ՝ի փշրեալ մասունս ահաւոր խորհրդոյն՝ է իսկապէս բոլոր մարդկութեամբն և համայնն Աստուածութեամբն։ Որպէս մասն ինչ Աստուածազարդեալ Հացին և Բաժակին՝ ոչ թէ մասն ինչ է Մարմնոյ և Արեանն Քրիստոսի, այլ ամբողջապէս բոլոր մարմին և արիւն նորա. զի որպէս ՝ի պատարագել քահանային փոքրիկ հաց և սակաւ բաժակ՝ փոխարկելով Հոգւոյն սրբոյ գոյանայ ամբողջ մարմին և արիւն Քրիստոսի, նոյնպէս և բան տեսակին փշրեալ փոքրագոյն մասն Աստուածազարդեալ Հացին և սակաւագոյն հիւթոյ բաժակին փոխարկեալ գոյացութիւնն անփշրելի գոլով ՝ի նոսին՝ է ամբողջ մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ. որ հաղորդելովն հաւաքէ իբրև զանդամս զեկեղեցի իւր առ ինքն՝ իբր ՝ի գլուխ Եկեղեցւոյ։

Յաղագս՝ Ի Քրիստոս է գլուխ Եկեղեցւոյ,
և զի Պետրոս։

Քանզի ընդհանրական Եկեղեցի այնու հաղորդութեամբ է խորհրդական անդամ միայնոյ Գլխոյն իւրոյ Քրիստոսի. և Գլուխն այն՝ որ է կերպարանն Աստուծոյ Հօր, «Ոչինչ յարիշատակութիւն համարեցար զքնեալն հաւասար Աստուծոյ. Այլ զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի առեալ՝ ՝ի նմանութիւն

մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև ըստ մարդ. խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ՝ և մահու խաչի. Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն ». Փիլիպ. Բ. 6—9։ Իսկ մի անուն է այն ի վեր քան զամենայն, շնորհեցեալ ի բարձրելոյն Հօրէ Աստուծոյ՝ խոնարհեցելոյ Որդւոյն Աստուծոյ. ոչ լուաւ եկեղեցին յատուկ պատկանեալ ի մարմնացեալ Աստուածն բան՝ անուն վերագոյն քան զամենայն, բայց միայն անունն Գլուխ անկեան. Թէպէտ և ի մէջ հնոյ ստուերական եկեղեցւոյն զանազան անուանք յարմարութեամբ ասացեալ լինէին ի գուշակողաց զգալոց Մեսիային, որպիսիք են՝ Ակնկալութիւն հեթանոսաց, Հրեշտակ ուխտի, Հրեշտակ մեծի խորհրդոյ, Հայր հանդերձելոյ, Հոգի երեսաց, Պահպան Իսրայէլի, և այլ բազում. այլ քան զամենայնն Ճշմարտութիւն և յատուկ պատկանեալ առ գալոյ Մեսիայն յանապատն ի շաբաթաս և ի մահ, էր միայն ասացեալն ի Մարգարէէն՝ Ալէմ, Գլուխ անկեան, Սաղ. ՃԺԸ. 22. զոր բացատրէ Առաքեալն ասելով, « Ալէմն էր ինքն Քրիստոս », Ա. Կորն. Գ. 4։ Զորմէ և սուրբն Պետրոս Հոգւով սրբով լցեալ ատենաբաներ առաջի իշխանաց ժողովրդեան և երիցանց Իսրայէլի. « Նա է վէմն անարգեալ ի ձէնջ շինողաց, որ եղև Գլուխ անկեան. Եւ չիք այլով իւիք փրկութիւն. զի և ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կալ մեզ ». Գործ. Դ. 11, 12։

Բայց ի մէջ նորոյս Ճշմարտութեան եկեղեցւոյ՝ Ալէմն այն եկեալ Մեսիայն կոչեցաւ Գլուխ եկեղեցւոյ. « Որով ուներմք զփրկութիւն Արեամբն նորա, և զթողութիւն մեղաց Մարմնովն նորա։ Որ է պատկերն անտեսանելւոյն Աստուծոյ, անդրանիկ ամենայն

արարածոց. Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի, որ երևին՝ և որ ոչն երևին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք. ամենայն ինչ նովաւ՝ և ի նոյն հաստատեցաւ. Եւ նա է յառաջ քան զամենայն, և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ։ Այս նա է Գլուխ մարմնոյ եկեղեցւոյ։ Կոլ. Ա. 14—18։ Այս արդարև կոչեցաւ Գլուխ եկեղեցւոյ, վասն զի նա է Շինող, նա է Տէր, նա Իշխան, նա Փրկիչ և Կեցուցիչ եկեղեցւոյ. և ամենայն բովանդակի ի մի բան ասել՝ Գլուխ եկեղեցւոյ։

Այլ թէպէտ սուրբն Պետրոս ևս ասացաւ Գլուխ եկեղեցւոյ, բայց զանազանեալ այնչափ հեռաւորութեամբ՝ որչափ ընդ մէջ է Ցեառն և Ծառայի, ընդ մէջ Պաշտելւոյ և պաշտողի, ընդ մէջ Դաւանելւոյ և դաւանողի, ընդ մէջ Երկրպագելւոյ և երկրպագողի, ընդ մէջ Աստուծոյ և մարդոյ՝ Աբրահամ և արարածոյ. որ է ասել՝ անհասանելի հեռաւորութեամբ։ Զի յորժամ ասեմք զՔրիստոսէ Գլուխ եկեղեցւոյ, ասեմք տիրապէս և բացարձակաբար. որում առնչաբար հետևի խորհրդական անդամ կամ ուղիկ եկեղեցի, որ է ժողովն ուղղափառ հաւատացելոց և մկրտեցելոց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որք և հաղորդին ի մարմին և յարիւնն տէրունական։ Իսկ ասելով զՊետրոսէ գլուխ Առաքելոց, ոչ հետևի թէ Առաքեալքն իցեն խորհրդական անդամք Պետրոսի. քանզի այնք ամենեքին Պետրոսիւ հանդերձ՝ են ամբողջ և լրացեալ անդամք միոյ Գլուխոյն Քրիստոսի։

Այսպէս բառն Գլուխ եկեղեցւոյ՝ ի Քրիստոս և ի Պետրոս այնու զանազանի, զի ի Պետրոս է անուն յարդական և առասական. իսկ ի Քրիստոս՝

անուն խսկական և բուն Աստուածաբանական. վասն այնորիկ առանց ասելոյ զանուանն Քրիստոս՝ միայն աւ սելով Գլուխ եկեղեցւոյ, նշանակէ զՔրիստոս՝ որ տիրապէս ինքնին է Գլուխ եկեղեցւոյ. զի է յատուկ անուն նմա, և անփոխադրելի ումեք յանդամոց նորա. վասն զի անդամն՝ որչափ և պատուականագոյն իցէ, ըստ որում անդամ՝ չէ գլուխ։ Իսկ առանց բացայայտելոյ զանուանն Պետրոս՝ ոչ կարելիք ասել գլուխ եկեղեցւոյ. այլ զոր ասեմք գլուխ Առաքելոց, է ասել գլխաւորն կամ առաջինն ի մէջ Առաքելոց. զի նա եղև առաջին դաւանող զՔրիստոսն Որդի Աստուծոյ, յորմէ կացուցաւ գլուխ և առաջնորդ. և վասն առաջնութեան հաւատոյ իւրոյ՝ անուանեցաւ Վէմ եկեղեցւոյ։ Որպէս ասն ի սրբազան Հարցն մերոց շնորհալի վարդապետութեամբ ասէ. «Որոշեաց ի մարդկային անկարգ գնացից զընտրեալսն ի սկզբանէ, զոմս և առաքեալս անուանեաց. և կացոյց նոցա գլուխ և առաջնորդ զերջանիկն Պետրոս։ Իբ Պետրոս յորժամ ասեմ՝ զո՞ ասեմ, զայն՝ որ դաւանեաց զՈրդի ի բնութենէ Հօր. և մեծագունի երանութեան արժանաւոր եղև. Վէմ անուանեցաւ՝ և ի հիմանս եկեղեցւոյ եդաւ»։ Սարգիս Մեծ։

Բայց Քրիստոս ինքնիշխան տէրութեամբ և հեղինակութեամբն իւրով է խորհրդական Գլուխ եկեղեցւոյ. ուստի ոչ պատկանի ասել զնմանէ գլխաւոր եկեղեցւոյ, զի գլխաւորն չէ տիրապէս գլուխ. այլ պատկանի զՊետրոսէ՝ որ չէ տիրապէս գլուխ, այլ վասն առաջնախօս լինելոյ ի դաւանութենէ՝ եղև գլխաւոր և առաջին ի կարգի հիմանց շինութեանն եկեղեցւոյ. և ահա յայս միտ Հանդէս Պետրոս գլուխ եկեղեցւոյ։ Որոյ առաջնութիւնն կամ գլխաւորութիւնն փոխադրելի է յաջորդաց իւրոց. և որ իրաւամբ յաջորդէ նմա, իրաւամբ ժառանգէ և զգլխա-

ւորական պատիւ նորա. վասն որոյ ի մէջ տիեզերա-
կան ժողովոյն եկեղեցւոյ՝ նմա անկ է բազմիլ գա-
հերէց. որ է «Սուրբ և առաջին ամենայն եպիսկո-
պոսապետաց հայրապետն Հռովմայ և փոխանորդն
Պետրոսի առաքելոյն». Շնորհ. Իլ.

Իսկ եթէ յաջորդն այն հայելով ի գերակայ ժա-
ռանգութիւն իւր՝ մեծամեծսցի, և զանձն իւր իբրև
զԱստուած՝ առանձին միշտ անսխալ ծանիցէ, որպէս
քարոզեն ի մերոց անտի հանապազորդք մեր, Հեգ-
սեմ՝ յորմէ կարգի հարկ լինի մեզ ասել զնա Ճա-
նաչել. Իւ կամ եթէ ձեռն արկանիցէ կորել՝ և յինքն
ամփոփել զՔահանայապետական իրաւասութիւնս և
զՀոգևոր ապետական արօտութիւս այլոց ազգացն Առա-
քելադիր Եպիսկոպասպետաց, յայտնի անիրաւի և
մեծապէս մեղանչէ. և զծայրագոյն քահանայապե-
տութիւն իւր՝ հպարտացեալ փոխէ ի ծայրագոյն
բռնաւորութիւն. քանզի երբեմն Պետրոս իւրով
իսկ Առաքելական գլխաւորութեամբ՝ ոչ կամեցաւ
երբէք յինքն կորզել զԱռաքելական արտօնութիւնն
այլոց Աստուածոյ. և ոչ իսկ կարող էր կորզել. զի
ամենեքին նոքա ոչ թէ ի Պետրոսէ ընկալան զԱռա-
քելական իշխանութիւնն իւրեանց, այլ անմիջապէս
ի Քրիստոսէ՝ քարոզել զհաւատս, աշակերտել զհե-
թանոսս, կապել և արձակել. և բացարձակապէս
հովուել զուսանաւորս հօտն Քրիստոսի և ածել ի փա-
րախս արքայութեանն Աստուծոյ. Իւ որք անմիջապէս
ձեռնադրեալք էին ի Քրիստոսէ, ինքեանք միջաբար
ձեռնադրէին իւրաքանչիւր ի վիճակս յանձնս իւ-
րեանց՝ զն և արժան սեպանէին. և ահա այնու սահ-
մանադրութեամբ և անընդհատ յաջորդութեամբ
լինին ձեռնադրութիւնք ի մէջ Առաքելական եկե-
ղեցւոյ, զոր չինեաց Քրիստոս ի վերայ հաւատոյ վե-
մին Պետրոսի՝ անյաղթելի ի դրանց դժոխոց.

Եւ արդարև ՝ի սկզբանէ անտի չինուԹեան նորա՝ հեռագնեալ երևեցան չարափառք և ամբարիշտք, որք իբրև զդրունս դժոխոց բացին զբերանս իւրեանց ՝ի վերայ սուրբ Եկեղեցւոյ. բայց ոչ կարացին երբէք, նոյնպէս և ոչ նորաղանդք կարեն՝ և ոչ կարացին երբէք յաղԹահարել զնա. վասն զի Գլուխ նորա Քրիստոս է, զոր երիցս անգամ փորձեաց սատանայ՝ և երիցս խայտառակեցաւ առաջի նորա։ Ա՛յլ ՝ի մատնուԹեանն գիշերի՝ յորժամ սեռանէր զնա մարդ անկեալ ՝ի ստորնայ երկիրս զարբարանայ և մահու, համարձակեալ մերձենայր ՝ի նա՝ և սրսնէր չարաբերն կարծելով արար ինչ մեղայ ՝ի նմա գտանել. զորմէ ասաց Տէրն, «Գայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ»։ Յովհ. ԺԴ. 30։

Զ՝ինչ գաւեր ՝ի նմա չուառեալդ և Թշուառացեալդ սատանայ. մի Թէ զվէմն Պետրոս կարծեցեր, զոր երբեմն կամէիր խորտակել իբրև զցորեան. որ և ՝ի գիշերին յայնմիկ զիւրաքաջ շարժեցաւ յերկիրս աղջկանն ՝ի գաւիԹ քահանայապետին, և երիցս ուրացաւ զՏէրն մինչև նշանակեալ հաւն խօսեցաւ։ Ա՛յլ այս է զվէմն անշարժելի՝ անսխալելի՝ վասն որոյ հաւատալի և երկրպագելի, որ մարդկուԹեամբն իւրով աշխարհի յաղԹեաց. և զիշխանդ աշխարհի դատապարտեաց, և զամենայն զորուԹիւնս քո խարտարակեաց Վէմն երկնաւոր՝ վէմն կենդանի՝ «զբլուխ անկեան պատուական, և որ ՝ի նա հաւատայցէ՝ մի ամաչեսցէ»։ Ա. Պետ. Բ. 6։

Ա՛յլ սկզբնաշարն սատանայ՝ որ հանապազ խնդրէ հնարս քակտելոյ զմիաբանուԹիւն եկեղեցւոյ՝ կամելով կործանել զնա, Թէպէտ քանիցս անգամ «Լարեաց զաղեղն իւր և զնենգսն վիրաւորեաց»։ Թէպէտ «Ի տանէն զչարն բուսուցանէր, և զվիրակացուս խարանին՝ քակտիչս և քայքայիչս առադրէր»,

Լ՝ մէ. Ա՞ւ. բայց ոչ կարաց որպէս կամէրն յաղթա-
հարել. վասն այնորիկ կարևոր վարկաւ առժամանակ
մի փոխել զարուեստ չարութեան իւրոյ, և կեղծա-
ւորեալ ցուցանէր զինքն իբրու նախանձախնդիր և-
կեղեցւոյ, և այնպէս զամենս յանմտաց անտի հրա-
պուրեաց, և խրատեաց զնոսա այնչափ ազգատեաց
լինել՝ մինչև զՀայրենի լեզու ժողովրդեան մերոյ ջա-
նային խոպառ խափանել։ Լ՝ու որ առաւել ողբալի է
և սոսկալի լսելեաց, զու զդպիսա եկեղեցին Հայաս-
տանեայց առաջի Քահանայապետին Հռովմայ Եւտի-
քական հերետիկոս համբաւել. որ և նա հաւատա-
լով բանից նոցին՝ առանց քննելոյ զԼուսաւորչական
դաւանութիւն մեր, ձեռնտու և զօրավիգն լինեը
նոցա՝ արկանել հերձուած՝ ի մէջ ազգին։ Որբ թէ
բանիւ և թէ գրով խառնեցուցին զոկարան և բա-
ժանեցին՝ ի մինչ, ասելով թէ՝ որ ոչն է պապական,
դժոխական է, զի պարտ է քրիստոնէին հաւատալ՝ ի
Պապն Հռովմայ. որ յաջորդ դրոյվ Պետրոսի առա-
քելոյ գլխոյն եկեղեցւոյ, նա է գլուխ եկեղեցւոյ.
և որ ոչն հաւատայ՝ ի Պապն՝ է արտաքոյ եկեղեցւոյ,
ուր չիք փրկութիւն. զի ոչ կարեն արձակիլ՝ ի կա-
պանաց՝ և ոչ ունին թողութիւն մեղաց։

Տեսանե՞ս, թէ որպէս տայ խմանալ բանարկուն
զբաւն Գլուխ եկեղեցւոյ՝ որ զՊետրոսն ասացեալ.
մինչև հաւատարել զնա և զյաջորդս նորա Գլխոյն
և Ստուծոյն եկեղեցւոյ. և որ սոսկումն բերէ լսե-
լեաց, դաւանիլ զնոսա՝ անխալ որպէս զՍտուծած։
Վ կայեալ անմիտ, յուսմբ՞ ուսար զմարդ առանձին՝
թէ և իցէ քահանայապետ, անսխալ լինել. Եթէ՝ ի
գլխաւորութենէն Պետրոսի զայդ յառաջ բերես, ոչ
ապաքէն և նա առանց ընդհանուր միաբանութեան
եկեղեցւոյն՝ ինքնին սխալական էր. վասն զի մարդ էր։
Լ՝ու զի ոչ ասաց Տէրն յՊետրոս՝ թէ դրուանք դը-

ժոխոց գքեզ մի յաղթահարեսցեն, այլ վասն եկեղեցւոյն ասաց՝ թէ դրունք դժոխոց ոչնա մի յաղթահարեսցեն. որ է մի միայն Կաթուղիկէ և Առաքելական սուրբ Եկեղեցի. զոր շինեաց Քրիստոս արդեամբ շարչարանաց իւրոց ի վերայ վիմին բանի, Վէմն երկնաւոր՝ վէմն կենդանի՝ «գլուխ անկեան պատուական, և որ ի նա հաւատացէ՝ մի ամաչեսցէ». Ա. Պետ. Բ. 6. Վասն որոյ և մեք հաւատամք ի Վէմն յայն ի Գլուխ անկեան, յոր և Պետրոս հաւատաց. որպէս գրէ ոմն ի սրբազան Հայոց արևմտեան եկեղեցւոյ. «Ա՛յլ մեք որ քրիստոնեայքս եմք և կոչիմք, ոչ ի Պետրոս հաւատամք. այլ յայն՝ յոր Պետրոսն հաւատաց, շինեալք Պետրոսի բանիւն որ զՔրիստոսէ».

Լու ահա այն հաւատալի և երկրպագելի Գլուխն անյաղթելի և անսխալելի եկեղեցւոյն իւրոյ՝ որպէս ասացաւ. Շինող է նորա, և Տէր է նորա, Իշխան և Քրիստոս և կեցուցիչ է նորա. վասն այնորիկ յատուկ է Քրիստոսի տիրապէս անուանն Գլուխ եկեղեցւոյ, որ է ասել՝ Աստուած եկեղեցւոյ. «Ի նմա բնակէ լրումն Աստուածութեանն մարմնապէս». Կոլ. Բ. 9. Զամն իրի եկեղեցի հնազանդ է Գլխոյ իւրում յամենայնի. զի նոյն է ասելն՝ Գլուխ իմ Յիսուս, և նոյն է ասելն՝ Աստուած իմ Յիսուս. որպէս սուրբն Յովհաննէս ի հանդուսեան իւրում ասէր, «Ի վերջ է քան զամենայն ասելի և խմանալի անուն՝ Աստուած իմ Յիսուս». Լու ԸՆԴ ԷՋ.

Հուսկ ուրեմն ասեմ. սուրբն Պետրոս ասացաւ գլուխ կամ գլխաւոր եկեղեցւոյ՝ ըստ որում ծայրագոյն անդամ եկեղեցւոյ. բայց Քրիստոս է Գլուխ եկեղեցւոյ՝ ըստ որում Աստուած եկեղեցւոյ, և ոչ թէ գլխաւորն եկեղեցւոյ Պետրոս. այլ Գլուխն եկեղեցւոյ Քրիստոս՝ խորհրդով Աստուածարուեստ Հաղորդու-

թեան իւրոյ զանդամս իւր զեկեղեցի յինքն հաւաքէ. վասն այնորիկ «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց. Եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր». Փիլիպ. Բ. 10, 11։

Դ—ՐՅԵ—Լ Ի ՎԵՐՅ ԻՐԻՐԴՅ Հ—ԼՍՐԴ—ՐԻԵՆ։

Արդ՝ որպէս Հայրն մի Հայր՝ միայնոյ Որդւոյ, նոյնպէս և Որդին մի գլուխ՝ միայնոյ եկեղեցւոյ. և չունի Քրիստոս զայլ խորհրդական անդամս, բայց միայն զեկեղեցի՝ ըստ որում եկեղեցի։ Եկեղեցին ևս չունի զայլ խորհրդական գլուխս, բայց միայն զՔրիստոս՝ ըստ որում Գլուխս եկեղեցւոյ. առ որ հաւաքին անդամք ըստ լուսեթեան՝ Հաղորդութեամբ կենդանարար Սարմնոյ և Արեան իւրոյ, որ է Աստուածաշունչ մեծագործութիւն, կամ մեծահրաշ Աստուածագործութիւն անսուրբ և անօրինակ։ Հնչեսցուք ուրեմն ի լսելիս ամենեցուն զայն Աստուածաստաց բան, զոր գրեաց ոմն վանականիր քաջամարտիկ աստուածաբան, «Եւ այս այն է՝ զորմէ ասէին թէ մատն Աստուծոյ իցէ, այլ այս այն է՝ որ ի սիրտս մարդոյ ոչ անկաւ»։

Իսկ արդ՝ անկարելի է մեզ ճառել զգերազանցութիւն սուրբ Պատարագին։ Անցուք ի խորհրդաւոր արարողութեանց պաշտաման նորին սուղ ինչ ընդ բան արկանել, որք առհասարակ հոգևորական եղանակաւ շարժեն զսիրտս հաւատացելոց ի զղջումն մեղաց՝ և յանկեալութիւն սրբարար շնորհաց. որով արժանի լինին մատչիլ ի ճաշակումն անմահական Հացին և Բաժակին։ Այլ զի մի երկարեսցին բանք մեր ի սմին, առցուք զբանս և զարարողութիւնս

որ զկնի Հայր Դերին, յարժամ քահանայն զկարգս-դրն ահաւոր ի տես ժողովրդեան վերառեալ ասէ բարձրաձայն՝ Ի Սրբոյ-Սրբոյն տրէոյ. յայնժամ ժողովուրդն՝ որ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ պատրաստ է մատչիլ ի սուրբ Հաղորդութիւն, ի լսել յեղակարծումն զայն անկարծելի ձայն՝ յանկարծ այլ յայլմէ եղեալ անկանի ի տագնապ անհնարին, որպէս զի ի յուսոյն իւրմէ ի դեղև ելանիցէ. բայց անդստին խսկոյն ի միտս իւր եկեալ՝ խրախոյս տայ անձին, և յայլ կերպ՝ զինքն քաջալերէ վերատին. Լ՝ապա ոչ իբրև լարագին աղաչաւոր, այլ դոգոյս իբրև ընդգրկելի սիրուն բռնաւոր՝ մտանէ ի պայքար ընդ պատարագչին. վասն որոյ փոխեալ զձայն իւր անդաւնօր կրիւք տագնապին, յարտասուս հարեալ աղաղակէ սրտիւ զայրագին, գոչէ բարձրաձայն զտոյգն և զիրաւացին. «Ահայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր»։

Լ՝ այնու բարձրաձայն գոչմամբ՝ զկիրս իւր յայտնելով կամի ասել, Ո՛վ սրբազան Պատարագիչ. մեք մեղաւորքս մտեալ յայս յարկ սրբութեան ի մերս Քաւարան, դիտեմք՝ զի ոչ կարեմք մեքէն արժանի լինել սրբոյ Հաղորդութեան. այլ ապաւինեալ յողորմութիւն Քարձրելոյն՝ կացեալ յանդիման սուրբ Պատարագիս, ակնկալեալ ապասմբ՝ զի արժանաւոր բայն ողորմակցութեամբ մերձեցուք յայդ ի սեղան անմահութեան, զի Արիւն Որդւոյն Աստուծոյ սրբեսցէ զմեզ ի մեղաց. զի նա է՝ ոչ միայն ըստ արդարութեանն Աստուծոյ Սրբոյ-Սրբոյն տրէոյ, այլ և ըստ մեծի ողորմութեանն նորա՝ «Լեանք, ասէ, յոյս, յարութիւն, քաւութիւն, և թողութիւն մեղաց». զի եթէ մեք մեզէն սուրբ լինել կարող էաք, ապա քաւութեան և թողութեան անկարօտ լինէաք։ Իսկ գուն ասելով Սրբոյ-Սրբոյն տրէոյ, սրգելոցս զմեզ ի Հաղորդութենէ

Մարմնոյ և Արեան Փրկչին մերոյ։ Մի թէ յոյս հոգւոց և փափագ սրտից մերոց զուր և ունայն եղիցի։ զի այն ինչ մեք յուսով ունկն դիր լինել, և հայիլ ի Սրբութիւնն յայն զաչս ի վեր ամբառնալ՝ փառաւորաբար զմեզ զուարթարար քարոզն Պօօխոմ։ դուռ զանակնուն նելին առ մեզ որոտացեր ձայնն սարսափելի ի Աբէ-Բիհ-ոբէոց։ օն անդր քան զյոյս մեր։ քանզի մեզ ոք իցե ինքնին սուրբ՝ որում այդ ահաւոր խորհուրդ՝ իցե Սրբութիւն։ Թէ և մեք իբրև զհրեշտակս սուրբ և անարատ լինէաք։ ոչ ապաքէն նոքին իսկ և ս և ոչ յօրինակ սորին կարէին անձամբ մերձենալ։ ուստի և Սերովբէն ունելեաք առեալ ի կայծականց անտի նուիրեցելոյ։ Հոմ. Զ. Ե։ մատուցանէր ի բերան Մարգարէին։ իսկ մեք հողէզինքս և մեղուցեալք՝ զիարդ կարասցուք մերձենալ ի Ճշմարիտն օրինակին։ Հա զինչ ասա։ զրկիցիմք ուրեմն խսպառ ի Սրբութենէ այսի Աստուածային Հաղորդութեան։ Օ՛ի ոչ ոք է որ յինքենէ սրբութեամբ արժանանայ հաղորդել։ բայց եթէ սրբաբար շնորհօք Հոգւոյն սրբոյ։ և ոչ ոք ինքնին է սուրբ։ բայց “Միայն սուրբ։ մի այն Տէր։ Յիսուս Քրիստոս։ ի փառս Աստուծոյ Հօրն։

Արդ՝ զինչ մեզ առնել։ որք միանգամ մերտեալ եմք յայս Աստուածային խորան։ ուր տեսանեմք զանմահ Թագաւորն փառացեալ բացեալ զուր անապառելի գանձարան։ կարօտութիւնք և տարապերաքունեայն և գտարկաձեռն եղանիցեմք։ ոչ բնաւ։ ամենեքին այդ մեզ անհնար։ Կենդանի է Տէր՝ թէ ոչ դարձցուք ասի անանկ ամաչեցեալ։ յորժամ առատապէս բաշխին պարգևք Աստուածային շնորհաց։ ոչ թողցուք զանձինս մեր մնալ ի ներքոյ ծանր պարտեաց։ յորժամ Տէրն մեր արդեամբ փրկագործ չարչարանաց իւրոց՝ կենդանեաց և ենջեցելոց առհասարակ զպարտսն հատուցանէ։ ընդէր մնացուք մնա-

նել ի դատաստան արդարութեան արժանապէս կը-
բել փոխարէն զպատիժ մեղայ, մինչ բացեալ է ա-
ռաջի մեր դուռն Աստուածային անհուն ողորմու-
թեան. ոչ գնամք ատի սովեալ ի քաղց և ի ծարաւ,
մինչ պատրաստեալ կայ առաջի մեր անմահական սե-
ղան Սրբութեան։ Ով սրբազան Պատարագիչ. գի-
տեմք զի վասն ահաւորութեան մեծի խորհրդոյն ի-
րաւամբ երկնչիս ի վերայ մեր, զի ոմ կարէ կալ ա-
ռաջի նորա. այլ վասն եղկոյի սիրտ քո և մի զան-
դիտեր։

Ի Վերայ Բարեբիսաստութեան Տէրամոր Կոչին։

Քանզի միաբան մեք ամենեքեան ունիմք բա-
րեխօս զՄայրն ամենօրհնեալ, որ մատուցանէ զաղ-
թիս և զաղաչանս մեր Որդւոյն իւրոյ. որոյ և բա-
րեխօսութիւնն առ Որդին իւր անտարակոյս ընդու-
նելի, որպէս ցուցաւ նախ ի հարսանիսն անդ ի Կա-
նա Գալիլեացւոց. ուր արար Յիսուս սկիզբն նշա-
նաց, վասն զի Մայրն արար անդ սկիզբն աղաչանաց.
նա՛ զի ոչ կամէր Յիսուս տակաւին նշան ինչ առնել
քանզի չէ էր հասեալ ժամանակ նորա, բայց և այն-
պէս՝ ոչ կարաց և Մօրն աղաչանաց անկարող լինել։

Ով, ո՞րչափ անոյշ էր այն հրաշալի գինին յարբ-
ումն ուրախութեան հարսանեաց բաղմականին. զոր
Յիսուս առնելով սկիզբն հրաշից, արար և սկիզբն
իւրոյ ճանապարհին դիմել ընթանալ ի Հարբարանս՝
ի խաչ՝ և ի խաչին ըմպել զդառն և լեղին. զի որ-
պէս հարսանիքն այն էր գինւոյն կարօտեալ, նոյնպէս
և հրաւիրեալն Յիսուս լեղւոյն ծարաւեալ. վասն ո-
րոյ ի խաչին աղաղակէր ասելով «Ծարաւի եմ». Յովհ. ԺԹ. 28։ Լու այնմ անհնարին դառն օշարա-
կին՝ զոր ըմպելոյ էր Յիսուս ի խաչին, խելամուտ

եղեալ և Մայրն յօրէ անտի բանից Տերունի Սիմէօ-
նին՝ կրէր զսուր խաչին իւրոյ Միածնի 'ի խորս իւ-
րում սրտին . և այնպէս ընդ Միածին Որդւոյն իւ-
րոյ յամենայն 'ի կեանս իւր 'ի չարչարանս և 'ի խաչ
համաչափիլ ընթանայր . ուստի յիրաւի է ասել, թէ
մինչև էր խաչին լեալ Աստուածընկալ, Մայրն երա-
նեալ՝ եղև խաչընկալ . և մինչև տեսեալ երկիր ըզ-
կուսածինն 'ի խաչին, տեսին երկինք զսիրա կուսին
'ի խաչին՝ և զխաչն 'ի սրտի կուսին : Այլ և այն-
պէս՝ Մայրն ողորմութեան աղաչէր, և Որդին ողորբ-
մած՝ լսէր . Նա՝ զի եթէ Մայրն չէր անդ և աղա-
չեալ, վստահ եմ ասել՝ զի ոչ արդեօք և Որդին զայն
ակիզբն նշանաց անդանօր առնէր, քանզի չէ՛ էր հա-
սեալ ժամանակ նորա . այլ ըստ հարկին՝ ժամանակ
եղև հարսանեացն կարօտութիւն առ գինին զոր չու-
նէին, և առ միջնորդութիւն կուսին զոր ունէին :
Յայսմիկ հաւատամք, թէ ուր Յիսուս և Մարիա-
մ՝ անդ կարօտելոց լիութիւն, տրտմեցելոց ուրա-
խութիւն, յանցանաց ներումն, մեղաց թողութիւն,
և դատապարտելեաց ազատութիւն : Վասն այնորիկ
գեղեցիկ խորհրդով աւանդեցին սուրբ Հարք Հայ-
աստանեայց եկեղեցւոյ, զի 'ի վերայ սրբոյ Սեղանոյն՝
ուր մատչի Պատարագ՝ բաց 'ի տերունական նշանէն
դնիցի և պատկեր Տիրամայր կուսին . զի ժողովուրդն
տեսանելով զպատկերն զայն՝ պատկերեսցէ 'ի միտս
իւր զվերափոխեալն սուրբ Աստուածածին, որ յեր-
կինս բարեխօս վասն մեղաւորաց . և այնու հաւա-
տով անկեալ առաջի նորա խնդրեսցէ զբարեխօսու-
թիւն վասն թողութեան մեղաց՝ առ Որդին իւր Մի-
ածին : Այլ եթէ յայսմ միջնորդական նպաստաւորու-
թենէ զուրկ և վրէպ լինէր ընդհանրական սուրբ Ե-
կեղեցի, արդարև ըստ նմանութեան ժողովոյ նորա-
դանդից՝ աղքատ լինէր և չքաւոր առաւել քան զե-

կեղեցին Հրէական հնոյ օրինաց . որ ըստ իւրու�
ատուերական վիճակին՝ ճոխացեալ էր ընտիր ընտիր
միջնորդօք , որպիսիք էին Աբրահամ, Մովսէս , Յի-
սուս , Եղիա՝ և այլ բազումք .

Վասնզի ՝ի հնումն ըստ տնտեսելոյ Մարդասիրին
Աստուծոյ՝ սիրելին իւր Աբրահամ արար սկիզբն բա-
րեխօսութեան . որ խոհեմամիտ քաղաքավարութիւ
հետզհետէ խոնարհեալ աղաչէր և խնդրէր անցու-
ցանել զցասումն արդարութեանն Աստուծոյ՝ որ ՝ի
բազմամարդ Սոդոմացիսն և ՝ի Գոմորացիս , մինչ ՝ի
տասնեակ թիւ արդարոց զիջանիլ՝ բայց ոչ գտաւ ,
Ծն՝դ. ԺԸ. ՅԶ. սակայն յայնմհետէ բազում անգամ
ներեալս Աստուած զմեղս մեծամեծս ժողովրդեան Իս-
բայելի՝ աղօթիւք և բարեխօսութիւ սիրելեաց իւրոց .

Իսկ ՝ի նորումն՝ սկիզբն արար սիրելի Մարն Յի-
սուսի առ սիրելի Որդին իւր ՝ի հարսանիսն անդ ՝ի
Կանա Գալիլեացւոց . քանզի Ճարտարապետն իմաս-
տուն իմաստութեամբ հոգացաւ , զի յառաջ քան
զչինութիւն եկեղեցւոյն իւրոյ՝ զկարևոր պիտոյս նո-
րին յառաջագոյն պատրաստեսցէ . վասն այնորիկ ըն-
Մարն իւր՝ լինել առաջին միջնորդ և բարեխօս Ե-
կեղեցւոյ , յառաջ քան զինքն հրաւիրանօք ՝ի հարս-
սանիսն անդ պատրաստեաց . քանզի գրեալ է , « Յու-
յաւուրն երրորդի հարսանիք էին ՝ի Կանա Գալիլ-
եացւոց . և անդ էր Մարն Յիսուսի ». Յովհ. Բ. 1.
Յորմէ երևի՝ թէ նախ քան զՅիսուս ուրոյն հրաւիր-
մամբ կոչեցեալ էր Մարիամ . զի զկնի ասելոյն թէ
Անդ էր Մարն Յիսուսի , յարէ անմիջապէս թէ
« կոչեցաւ և Յիսուս և աշակերտքն նորա ՝ի հարս-
սանիսն ». Նոյնդ. Բ. 2.

Տեսանեմ , զի ըստ իմաստութեանն Աստուծոյ՝
յառաջագոյն հրաւիրեալ էր Մարիամ վասն բարե-
խօսութեան . կոչեցաւ և Յիսուս վասն հրաշագոր-

ծուլթեան, և աշակերտքն վասն վկայութեան. որք զաղաչանս Տիրամօրն լուան ականջօք իւրեանց, և զնշանն Յիսուսի տեսին աչօք իւրեանց, և այնպէս եղեն մեզ վկայք ճշմարտութեան. արդ՝ հաւատայ Եկեղեցի վկայիցն Յիսուսի, նշանացն Յիսուսի, և բարեխօսութեան Մօրն Յիսուսի. Հաւատանքք, որ և վասն յաւերժական ուրախութեան, զի անդ եղև սկիզբն բարեխօսութեան և սկիզբն նշանաց. իսկ որ սկիզբն է՝ ապա և սկզբնաւորեալքն հետևին։

Ի վերայ հրաշէց, և մասանց Սրբոյ, և երբոյ խաչի, և երիրդագրութեանն որ Սեղանոյն յեկեղեցւոջ, և գնորինեալն որ Տեղւոյ։

Զի յորժամ կատարեցաւ Աստուածաշէն եկեղեցի յաւուր մեծի Զենաեկոստէի, յայնմհետէ որքան զօր բազմացան հրաւիրեալքն բազմականք ի հարսանիսն անապական. յորոց բազումք երանեալ հաղորդութեամբ և բազումք Շնորհալն հաղորդութեամբ ի Քրիստոս կատարեցան։ Որոց աղօթիւք և բարեխօսութեամբ ընդ ժամանակս ժամանակս երևեցան և երևին հրաշագործութիւնք ի մէջ եկեղեցւոյ, զորս պարտ է հաւատալ. զի որ ինչ վկայութեամբ Եկեղեցւոյն ճշմարիտ է՝ այն իսկ է հաւատալի։

Այլ ոչ է արժան հրաշից առ մեզ յաճախել. զի մի փոքրկացին հաւատք մեր և վերասցի ի մէնջ Երանութիւնն Քրիստոսական. որ ի ժամանակի անտի սրբոյն Թովմայի տեսանելոյ աչօք զյարուցեալն Քրիստոս՝ այնմ եղաք բարեմասնեալ։ Զի որպէս «Սուրբ Հոգի» փոքրկացուցանէ զզարմանս, նոյնպէս և հրաշք յաճախ երևեալք՝ փոքրկացուցանեն զմեծութիւն հաւատոյ. մանաւանդ զի ըստ առածին՝ «Ոչ է պարտ ամենայն մարդոյ հաւատալ», նոյնպէս

և ոչ ամենայն հրաշից՝ որք յանդէպս և ի տարադէպս իցեն երևեալք. զի մինչև անկեալ իցէ ընդ քննութեամբ հաւատարիմ պաշտօնէից եկեղեցւոյ, և ճշմարտութիւնն չէ ի նոցուանց վկայեալ՝ ոչ է արժան հաւատալ։ Այսն զի պարտ է քննել զսկիզբն հրաշագործութեանն այնորիկ՝ թէ ո՞վ արար. և զմիջոցն՝ թէ որո՞վ անուամբ կամ որո՞վ զօրութեամբ արար. և զբ-վախճանն՝ թէ վասն որո՞ւ արար. և յորժամ տեսանի, թէ սկզբամբ՝ միջոցաւ և վախճանաւ համեմատին հրաշիցն Աստուածոյ և Սարգարէից կամ այլոց Սրբոցն եկեղեցւոյ, որպէս զի գործողն իցէ ընտրեալ յաշխարհէ և ստեղծեալ յաշխարհէ, և գործն՝ արարեալ անուամբ և զօրութեամբն Աստուծոյ, և երևեալ վասն շինութեան և պայծառութեան եկեղեցւոյ՝ ի մխիթարութիւն տառապեալ հաւատացելոց և յամօթ երեսացն անհաւատից. յայնժամ վկայեալ լինին ճշմարտութիւնք հրաշիցն այնոցիկ՝ զոր արժան է հաւատալ։ Յորոց սակի են պէսպէս զօրութիւնք երևեալք ի մասանց և յոսկերաց Սրբոց ի ժամանակս նեղութեան. և զոր տեսեալ եմք աչքք մերովք զբժշկութիւնս ծանր հիւանդաց և դժուարաբուժելի ախտաժետաց՝ կենաց փայտիւն հրաշագործեալ, մինչև զարմանալ իսկ բժշկաց և ապշիլ հեթանոսաց. և արդարև լինին այնպիսի բբժշկութիւնք հիւանդաց՝ սրք հաւատով մերձենան ի տուրբ Խաչն Աստուածընկալ, և կամ յոսկերս Սրբոց՝ զոր բարեպաշտութեամբ պատուէ սուրբ Եկեղեցի իբրև կենդանի բնակարան Աստուածային շնորհաց։

Այլ զայս մեծահաւատ բարեպաշտութիւն Կաթուղիկէ եկեղեցւոյ նորաղանդք անգոսնեն. որպէս զի զսուրբ Խաչն Քրիստոսի՝ և զՆշխարս կամ զՊատկերս Սրբոց պաշտելով ատուածական երկրպագութեամբ՝ խարդաւանեալ իցէ ի վհն բազմաս-

տուած մոլորութեան։ Եւ վասն պատուելոյ զՊատկերսն Սրբոց՝ պատկերապաշտս կոչեն. և վասն երկիրս պագանելոյ Խաչափայտին Քրիստոսի՝ փայտապաշտս անուանեն. Թողեալ՝ ասեն, զՔրիստոս Աստուած որ խաչեցաւ, զփայտն յորոյ վերայ խաչեցաւ՝ զայն իբրև զԱստուած պաշտեն. որ է յայտնի զոպարտութիւն՝ և դիւական չարախօսութիւն։

Ա՛վ չարախօս. զայդ զոպարտութիւնդ՝ զոր խօսիս ի վերայ Կաթուղիկէ եկեղեցւոյ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիս. այլ սկզբնաչարն սատանայ որ ի քեզ է՝ նա տայ քեզ խօսել, և դու խօսելովդ՝ նմա հաճայաս։ Եւ եթէ կամիս առաւել ևս նմա հաճայանալ, գնա դու և մուտ ի մէջ բազմութեանն Հրէից, որք նեղին զՅիսուս ի ճանապարհին յերթալ նորա ի տուն Յայրոսի իշխանին՝ բժշկել զմիամօր դուստր նորին. անդ ի մէջ ամբոխին տեսցես դու զկին մի տեռատես, որ առ պարկեշտ պատկառանացն իւրոց՝ ոչ համարձակի մերձենալ առ Յիսուս. այլ ի ծածուկ մերձենալով միայն ի քղանցս հանդերձի նորա՝ հաւատայ փրկիլ։ Եւ յորժամ տեսանես զնա, որպէս սոլոր ես հանապազ առնել՝ կեղծաւորսքիր առ նա. և ցոյց նմա զդէմս խաբուսիկ ջերմեռանդութեան՝ ասելով, Ես՝ եմ վարդապետ Աւետարանական ճշմարտութեան, եկի քարոզել քեզ զճշմարտութիւն. և այնպէս խաբէական համոզիչ բանիւք ձերովք խրատեա զնա, զի մերձեսցի նա յանձն Յիսուսի՝ և մի ի հանդերձս նորա. ասելով՝ եթէ հանդերձն զոր զգեցեալ է՝ չէ Աստուած կենդանի, որ կարողասցի զքեզ բժշկել. այլ կրտաւ ինչ անպիտան՝ ի բամբակէ կամ ի վրց ձեռագործ մարդկան. և արդարև որք բաժանեցինն զնոսա ի մէջ իւրեանց և զգեցան, ոչ ինչ զօրացան. այլ մնաւանդ ի ժամանակի Յարութեան նորա իր-

ռովեցան, «Եւ եղեն իբրև զմեռեալս»։ Այլ մանաւանդ ի հարցանելն Յիսուսի՝ թէ «Մի՞ թէ որ մերձեցաւն յիս . . . քանզի գիտացի՝ եթէ զորութիւն ել յինէն», Լուկ. Ը. 45, 46. Նա և յասելն նորա ցկինն, «Դուստրեակ դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն. և եղիցիր ողջ ի տանջանաց քոց», Մարկ. Ը. 48. Մատթ. Ե. 34. խիզ զակաղջս քո ի լսել զայն, և կափոյ զաչս քո զբժշկութիւն կնոջն տեսանել։

Այլ կաթուղիկէ եկեղեցին տեսանէ զկինն հաւատով մերձեցեալ ի հանդերձսն Յիսուսի՝ և առժամայն բժշկեալ, նա և լսէ զբան նորա թէ «Զորութիւն ել յինէն», անդ ուրեմն խորհրդաձեալ ըստ Հոգւոյն շնորհաց՝ զմանկունս իւր այսպէս օրհնեցանէ. զի որ կտաւով հանդերձիցն իւրոց ներգործեաց առ մերձեցեալն հաւատով զԱստուածային զորութիւն, ապա առաւել ևս ներգործէ փայտիւն պատուական խաչին իւրոյ. քանզի զհանդերձսն կրեաց ի զգեստ Մարմնոյն՝ զոր կամեցեալն էր թողուլ զինուորաց։ Այլ սիրեաց և կրեաց զփայտ խաչին ի սէտս փրկութեան աշխարհի. յորում մատաւ բեւեռեցաւ՝ և Աստուածային արեամբն ներկեաց, և շնորհեաց զայն մեզ հաւատացելոցս լինել հովանի և պահպան. վասն որոյ հաւատայ եկեղեցին՝ թէ խաչեալն Աստուած մարմնով Աստուածութեամբն իւրով ի նմա բնակէ. և այնու հաւատով կոչէ զմեզ երկրպագել սրբոյ խաչին՝ և զբնակեալն ի նմա միշտ փառաւորել։ Այլ ոչ որպէս ըստ քոյին բարբանջանացդ՝ իբրև Աստուծոյ երկրպագէ և իբրև զԱստուած պաշտէ, այլ վերբերական երկրպագութեամբ իբրև Աստուածայնոյ երկրպագէ. և ըզբնակեալն ի նմա՝ պաշտողական երկրպագութեամբ իբրև զԱստուած փառաւորէ. և որպէս առնէ՝ նայն

պէս և ուսուցանէ, թէ օրհնութիւն և փառք և երկրպագութիւն՝ որ պաշտողաբար մատուցանի 'ի մէնջ, վայելէ միայն Աբարչին՝ և ոչ արարածոց ամենեքեան. զի նա միայն է պաշտողական փառատրութեամբ երկրպագելի օրհնեալ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Իսկ յորժամ զերանելեացն ասեմք օրհնեալ և փառաւորեալ, այն օրհնութիւն կամ փառաւորութիւն չէ 'ի մէնջ մատուցեալ, այլ 'ի Քրիստոսէ շնորհեցեալ Աստուածահաճոյ և առաքինի վարուց նոցա. և առ 'ի նոցանէ հոգւով և ճշմարտութեամբ առ ինքն մատուցեալ պաշտողական փառացն փոխանակ՝ փառք պարգևական։ Զ 'ի որք փառաւորեն զՔրիստոս պաշտողական փառաւք ասա 'ի կենաս իւրեանց, նոքա փառաւորին 'ի Քրիստոսէ պարգևական փառաւք անդ 'ի կայանս իւրեանց, ըստ որում ինքն ասէ. «Զ փառաւորիչս իմ փառաւորեցից». Ա. Թագ. Բ. 30. այլ վասն պաշտողական փառաց զոր 'ի մէնջ պահանջէ, ասէ. «Յս եմ... Աստուած նախանձոտ. Ելք. Ի. 5. զփառս իմ այլում ոչ տայց». Յես. Խբ. 8։

Յս ահա այնպէս ճանաչեմք զսուրբ Աստուածածինն՝ և ասեմք փառաւորեալ և օրհնեալ, զի օրհնեաց զնա Աստուած և փառաւորեաց առաջի ամենայն ազգաց. զայս ասելով եկեղեցին՝ մի թէ զկոյսն իբրև զԱստուածծ պաշտէ։ Յս եթէ այսու աստուածածոլքս նորազանգք զրպարտեն երկիրպագանել նմա և իբրև զԱստուած պաշտել, ուրեմն ընդ զրպարտութեամբ իւրեանց արկանեն և զաղգական նորին՝ զեղիսաբեթն ասեմ՝ զլցեալն Հոգւով սրբով. որ 'ի լսելն զձայն ողջունի սրբուհւոյ կուսին՝ ասէր, «Օրհնեալ ես դու 'ի կանայս». Ղ. Ա. 42. և զայն ասելով՝ զԱստուածածին զնորահրաշ օրհնութիւնն 'ի նմա խոստովանէր, և խոստովանելովն զնա

մեծացուցանէր. և ընդ այն կցէր ասելով, «Եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո». և այս իսկ էր օրհնութիւն պաշտողական մատուցեալ առ Աստուածորդին. յորմէ առեալ եկեղեցին երգէ ասելով, «Ցուք օրհնութիւն պտղոյ կուսին»։ Լ.Լ. Յորժամ եկեղեցին զորհնութիւն և զփառս և զդովքաւանութիւնս պաշտողաբար մատուցանէ, նմա միայնոյ մատուցանէ՝ որում պաշտողաբար երկիրպագանէ. վասն զի օրհնութիւնք՝ փառք՝ և երկրպագութիւն պաշտողականք՝ են արտաքին նշան ներքին աստուածպաշտութեան։ Այս գիտելով պիղծն Արիոս, որ զանազական Աստուածութիւն Որդւոյն ուրանայր, նմա և պաշտողական փառս մատուցանել զլանայր. վասն որոյ՝ փոխանակ ասելոյ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ըստ չարափառ մոլորութեան իւրում ասէր՝ Փառք Հօր Որդւով 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ։

Իսկ սուրբ Եկեղեցին յամենայն 'ի պաշտամունս և յաղօթս իւր հաւասարապատիւ երկրպագութիւն զպաշտողական փառս մատուցեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ Երրորդութեան՝ ասէ. «Օրհնութիւն և փառք (կամ Փառք) Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». և այս պաշտողական փառաբանութիւն եկեղեցւոյ յաճախեալ է 'ի բերանս արանց և կանանց՝ ծերոց և երիտասարդաց. որք 'ի ժամանակս ուրախութեան իւրեանց գոհացեալք, և 'ի ժամանակս տրտմութեան և սգոյ իւրեանց մխիթարեալք, ասեն՝ Օրհնեալ ես Աստուած, կամ Փառք քեզ Աստուած։ Եթէ լուաւ զպարտիչն այն՝ կամ յումմէ՞ լուաւ ասել՝ Փառք քեզ սուրբ Աստուածածին, կամ Փառք քեզ սուրբ Պետրոս առաքեալ, և կամ Փառք քեզ սուրբ Գրիգոր լուսաւորիչ. և եթէ զպարտիչն այն չարախօսէ վասն մեր առաջի մարդկան, են բազումք՝ որք բարեխօսեն վասն մեր

առաջի Աստուծոյ. բայց «Այ այնմ, որ ասիցէ ըզ-
չարն բարի՝ և զբարին չար»։ Այլ կամ է ինձ ընդ-
նմին սակաւիկ մի ևս բանագնաց լինել.

Ինքնդ դու զզպարարիչ դատախազ. Զի այլ է
փառք՝ և երկրպագութիւնն պաշտօղական, զոր մա-
տուցանեմք միայն Աստուծոյ. և այլ է փառք և եր-
կրպագութիւնն պատուողական և վերբերական, զոր
մատուցանեմք սրբոյն Խաչին և ամենայն սրբոցն Ա-
տուծոյ. ուրեմն ոչ կարեմ իրաւամբ զմեզ պատկե-
ցապաշտս կոչել՝ քանզի չեմք, այլ եմք պատուողս
պատկերաց սրբոցն Աստուծոյ՝ զի սուրբք են և փա-
ռաւորեալք միշտ առաջի Աստուծոյ։ Այլ ահա այնու-
զանազանութեամբ երկրպագէ եկեղեցին պատուա-
կան սրբոյ Խաչին. և ի պատուելն անդ երկրպագու-
թեամբ՝ սովորաբար խօսի ընդ խաչեցելոյն, և դուն
ուրեք հաւատոցական ասացուածով՝ ընդ Խաչին. և
առ խնդրելոյ մեր զզօրութիւն և զպահպանութիւն
նորա, քարոզէ խնդրել ի Տեառնէ՝ և ոչ ուղղակի
ի սրբոյ Խաչէն, զի մի համարեսցի ինքնին՝ իբրև ա-
ռանց զօրութեան խաչեցելոյն լինել լսող աղաչա-
նաց. և վերբերականն երկրպագութիւն կարծեսցի
պաշտօղական։ Այսն այնորիկ յորժամ ի հանդիսի
յայնմիկ վերբերական երկրպագութեանն եղանակէ
«Խաչի քոյ Քրիստոս երկիրպագանեմք...». անդէն
առ նմին կոչէ զհաւատացեալս ի պաշտօղականն եր-
կրպագութիւն՝ ասելով, «Այսպէս հաւատացեալք
երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ». և ի
վերջն փառաւոր հանդիսին այնորիկ՝ անմիջապէս ըզ-
պաշտօղական փառս և զերկրպագութիւն իւր մատու-
ցանէ ամենասուրբ Երրորդութեան, ասելով՝ «Փառք
և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն»։
Այսպէս և ի հանդիսի տօնախմբութեան Սրբոց՝
սրբոցի և պատուողական փառաց զանուանս կամ ըզ-

Մասունս նոցա փառաւորէ, միշտ ի վերջին հատուածս երգաբանութեանց՝ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ասելովն, զպաշտօղական փառս իւրաքանչիւր Աստուած մատուցանելով զհանդէս Սրբոցն կատարէ։

Եւ այս օրինակ պատուազական երկրպագութիւնս երկիրպագանեմք սրբոյ Սեղանոյն, յորոյ վերայ Քրիստոս պատարագի։ Այս և Ցնծրինական սուրբ Տեղւոյս նորին, զոր Մարգարէն զայդ և զգերեկ հանապազ տենչայր գտանել. վասն որոյ ուխտ դնէր անձին և ասէր, «Թէ ոչ մոռից ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողնիս մահճաց իմոց. թէ տաց քուն աչաց իմոց, կամ նիրհ արտևանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց. մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ»։ Այլ իբրև ի մարգարէական շնորհաց Հոգւոյն լուր առնու զնմանէ Յեփրեմայ, և նովին հոգւով գտանէ զնա ի դաշտս մայրեաց, ամենայն ուրախութեամբ հրաւիրէ զազգն ասելով, «Մտցուք ի յարկս նորա, երկիր պագցուք ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա»։ Սաղ. ՃԼԱ. 5—7։

Հապա հարցցուք զՄարգարէն, թէ ընդէր եղև նա այնպէս տեղասպաշտ կամ յարկասպաշտ։

Այս՝ ով աստուածահայր մարգարէ. մոռացար արդեօք զնեծ և զառաջին պատուիրանն Աստուծոյ, զտուեալն Աստուածատես մարգարէին Մովսէսի, թէ միայն «Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, և զնա միայն պաշտիցես»։ Բ. Օրէն. Զ. 13։ Մաթ. Դ. 10։ Այդ՝ զի եղև քեզ, զի աւանիկ երկիրպագանիցես ի տեղւոջն՝ ուր կացեալ են ոտք նորա։

Պատասխանէ Մարգարէն. «Այ՛ մոռացայ, և ոչ երբէք մոռանամ. այլ զի՝ յամենայն սրտէ իմմէ որպէս սիրեմ զնա, այնպէս սիրեցի և զվայելչութիւն տան նորա՝ և զտեղի յարկի փառաց նորա. քանզի

սուրբ է և պատուական տեղն այն՝ ուր կացեալ են ոտք նորա . և յոյժ սիրելի են յարկք նորին Ցեառն զօրութեանց , « Ցանկայ և փափագի անձն իմ ՝ի գաւիթս » նորա . Սաղմ . ՁԳ . Զ .

Իսկ՝ որ արժան է ըստ Մարգարէին և ընդ նմին սիրով երկիրպագանել ՝ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա , զինչ անարժանութիւն իցէ ապա սիրով և մեծագոյն պատուով երկիրպագանել սուրբ և պատուական խաչն նորա՝ յորոյ վերայ խաչեցաւ բարձրացաւ , և ՝ի նմա առ ինքն ձգեաց զամենեսին զմեզ բարձրացուցանել .

Իսկ որք անդամնեն զայս Աստուածահաճոյ բարեպաշտութիւն Եկեղեցւոյ , Նոքա ոչ հաւատան լինել ՝ի սուրբ խաչն Աստուածընկալ՝ յաղթողական պահպանողական և բժշկական զօրութիւն Աստուծոյ , ուստի բան մոլորական վարդապետութեան հաւատոյ նոցին՝ ՝ի զուր պարծի Առաքեալն , որ երդնու ոչ յայլ ինչ պարծիլ՝ « Նայց միայն ՝ի խաչն Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի » . Գ՝ալ . Զ . 14 . զի յայլ նոցա խաչափայտն Քրիստոսի է հասարակ փայտ ինչ ասնարգ , սակայն մեզ ուղղափառացս՝ « Փայտ կենաց է ամենեցուն՝ որք պատսպարին ՝ի նա » . Ա՝ռակ . Գ . 18 . Արդ՝ այսչափ ինչ բաւականացի այժմիկ ընդդէմ նորադանդից , մեք դարձուք անդրէն զանհաւատալի հրաշիցն խօսել .

Ի վերայ հաստատութեան դոտրոնեան ՝Ի ՝Ի ՝Ի .

Ա՝յլ զտարապայման և զայլանդակ հրաշագործութիւնս՝ զոր լուաք և զոր ընթերցաք ՝ի վարս ոմանց և ՝ի թարգմանութիւնս յայլոց լեզուաց , չէ արժան ամենևին հաւատալ . վասն զի Կաթուղիկէ եկեղեցի պերճ է և ճոխ լիակատար պարգևօք Աս-

տուածային ընդհաց, և ճրագ լուսափայլ. որ առաջ տեսթեամբն իւրով որպէս ճանաչէ զԱստուած, նոյնպէս և զԱստուածայինն բարձրագոյն ճանաչէ, որով և լուսաւորի ամենայն մարմին նորա. զի լուսաւորեալ մտաք լինիցին զգաստ և զգոյշ ի սուտ և ի կեղծեալ աստուածայնոց. զի եթէ ըստ Տեառն բանի "Յաւրիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տայցեն նշանս մեծամեծս... առ ի մոլորեցուցանելոյ ", Մ՝ռի. ԺԳ. 22. ապա յարիցեն և սուտ քրիստոսեանք և սուտ վարդապետք, որք "Կերպարանեալք ի կերպարանս առաքելոյ Քրիստոսի ", Բ. Կորն. ԺԱ. 13. Ի "Որոց կատարածն կորուստ է ", Փիլիպ. Գ. 19. ցուցանեն զանձինս իւրեանց իբրև ուսնողս բժշկական զօրութեան: Այլ զգիրս անընդունակս եկեղեցւոյ ընթեռնուն ի վերայ հիւանդաց. և տան գիր ինչ ազօթից կամ յաւելութիւնս ծրարեալ պահել և կրել միշտ ի պարանոց կամ ի գլուխս նոցա. և ախտացեալն եթէ ուրեք երկուցեալ իցէ՝ հող կամ փոշի բերեալ ի տեղւոջէ անտի՝ ընթեռնուն ի վերայ նորա, և տան զայն ծամ և անխօս արկանել ի գետ կամ ի ծով: Այդկերպ բժիշկ՝ և եղկերպ ախտաւոր. նա՝ առածն Տէրունեան առ նոսա յաբմարաւոր, "Արդ կուրի առաջնորդել, մի ապաքէն երկոքին ի խորխորատ անկանիցին ", Մ՝ռի. Զ. 39. որպէս անկեալ են դիւապաշտ վէճկք և կախարդք, և անկանին ընդ նոսին՝ որք առ նոսա ապաւինին:

Այս և ոմանք ի գռեհկաց շրջին ի վանորայս, և յաւուրս Տօնից մտանեն ի ժողովս Ուխտաւորացս. և ի ժամանակի սուրբ Պատարագին կեղծեն զանձինս իւրեանց իբրև ուշաթափեալ. և յետ սակաւուց բարձրը աղաղակաւ՝ կախուցեալ աչքք ազդեն զսուտ տեսիլ իւրեանց ի սոսկումն ունկնդրաց, որպէս թէ այլ ինչ հոգի ի ներքուստ անտի տայ նոցա բարբառել:

Լն և ոմանք՝ որք ոգիովն կամ յէիոթրոթն սրուեստիք և կամ գազանի մեքենայիք՝ գործս զարմանալիս իրրև հրաշս ցուցանեն, զի նոքաք ի վանն իւրեանց աւելի արդիւնս հաւաքեսցեն. բայց եզկելիքն՝ այնու աւելի ևս յանձինս իւրեանց դատապարտանս ընդունին, զի նոքաք պատճառս տան արձակել զլեզուս անհաւատից կատակել զհաւատս քրիստոնէից.

Ա.Ա.Լ յաղագս այնպիսի խաբեբայ արանց և խաբեական նշանաց՝ հարկ ի վերայ կայ ի և իցէ ազգի առաքելական եկեղեցւոյ բառնալ ի միջոյ, և խրատել զժողովուրդն չհաւատալ երբեք այնպիսեաց. զի մի նմանեալ տիմար վաճառականաց՝ զԱստուածածիք զլուսափայլ մարգարիտս հաւատս իւրեանց յիմարաբար փոխանակեսցին ընդ կեղծեալ ոսկւոյ՝ ոսկի փայլ անարգ սղնձոյ սուտ իրեւոյթ զարմանալեաց.

Ի վերայ Բարեբասութեան Սրբոյ, որոյ և վասն Բանական տիրոյ նոցա.

Ասան զի Ճշմարիտ հրաշագործութիւնք՝ ի ընկզանէ անտի որչափ երևեցան՝ եղեն աղօթիւք և բարեխօսութեամբ Սրբոյ. բազում անգամ ևս միաբան աղօթիւք բազմութեան հաւատացելոց ի ժամանակս նեղութեան իւրեանց. որոց լսէր Աստուած վասն սիրելեաց իւրոց՝ որք գտանէին ի մէջ նոցա, և մաղթէին անցուցանել զարտմտութիւն բարկութեան նորա ի վերայ մեղայ իւրեանց. և նա ողորմութեամբ բբն իւրով աբանչելի հրաշիւք կատարէր զնոսին ցաւս նոցա՝ և փրկէր զնոսա.

Օ՛այս ընդունին նորաշանդք. քանզի ասեն, Սուրբքն Աստուծոյ՝ ցորչափ յաշխարհի ասա կենդանի են, օրհնեն զԱստուած և բարեխօս լինին վասն մե-

զաւորաց, և Աստուած լսէ ձայնի աղօթից նոցա. իսկ յետ մեռանելոյ և ելանելոյ նոցա յաշխարհէ. զմարդ բարեխօսեսցին՝ որք ոչն օրհնեն զԱստուած. յառաջ բերեալ զբան Մարգարէին, "Ո՛չ թէ ... մեռեալք օրհնեսցեն զքեզ... այլ կենդանիք օրհնեսցեն զքեզ». Ի՞սայ. ԼԸ. 18. 19. Ահա այսպէս քարոզեն ի ժողովս իւրեանց, և տան ուրանալ զարեխօսութիւն սուրբ Աստուածածնի և ամենայն Սրբոց.

Ինչ մեք զճշմարիան ասեմք. Աստուած՝ որ լսէ յամենայն ժամ կենդանի Սրբոց իւրոց, լսէ հանապազ և երանելոյ ենջեցելոց. վասն զի որպէս անզեղջեն և յուսահատք և անհաւատք ի կեանս յայսմիկ՝ թէպէտ կենդանի են առաջի մարդկան, բայց մեռեալ են առաջի Աստուծոյ, նոյնպէս և ամենայն հաւատացեալք՝ որք առաքինի վարուք Սրբութեամբ և Հաղորդութեամբ ի Քրիստոս կատարեցան, թէպէտ մեռեալ են ի մարդիկ՝ բայց կենդանի են ի Աստուած. որք ի կայանս իւրեանց անդադար օրհնեն զնա յուսով յարութեան, և յայնմ հետէ օրհնեսցեն զնա մինչև յաւիտեան. և ահա Մարգարէն յայս միտ լսացուցանէ զբան իւր "Ո՛չ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ, այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ յայսմհետէ մինչև յաւիտեան». Ի՞սայ. չէ պարտ ընդ այնպիսիս զարմանալ. զի որք ախտացեալ են ի հաւատս, անկարծ թէ այնոքիկ պակասեալ են Ի մտաց. վասն այնորիկ և բանք նոցա միշտ պակասեալ գտանին. Ինչ որ միանգամ կամիցի խոնարհութեամբ լսել և ճշմարտութեանն հաստատ լինել, չէ ինչ դժուարին. վասն այնորիկ կարևոր վարկայ սակաւիկ մի ևս ասուէն երկարել.

Ա՛յլ է կենդանի ի մարմնի՝ և այլ է կենդանի ի հոգի. որպէս և նոյն է ասել, այլ է մեռեալ ի մարմնի՝ և այլ է մեռեալ ի հոգի. Ի՞նչ այս յայտ է՝

զի յորժամ տեսանէր Մովսէս զհրաշալի վառուն մռ-
ռենալն, լուաւ անտի զձայնն Աստուծոյ որ ասէր.
«Լոս եմ... Աստուած Աբրահամու, Աստուած Իսահա-
կայ, և Աստուած Յակոբայ». Լուկ. Գ. 6։ Արդ՝ ուր
էին յայնժամ Աբրահամ Իսահակ և Յակոբ. ոչ ա-
պաքէն բազում ամօք յառաջ մեռեալք և ելեալք է-
ին յաշխարհէ. ապա զիարդ ոչ ասաց Աստուած թէ
Ես էի Աստուած Աբրահամու, Իսահակայ, և Յակոբայ.
այլ ասաց թէ՝ Ես եմ. զի այնու ասացուածովք նոցին
իսկ բազմամեայ մեռելոց՝ զինքն Աստուած ներկայա-
ցուցանէ, և զնոսա առաջի իւր միշտ կենդանի ցու-
ցանէ. վասն այնորիկ յարէ Յիսուս 'ի բանն յայն
թէ՝ «Լոս Աստուած չէ մեռելոց, այլ կենդանեաց.
զի ամենեքին նմա կենդանի են». Ղուկ. Ի. 38. որ-
պէս և առ Մարթա ասէր, «Որ հաւատայ յիս,
թէպէտ և մեռանի՝ կեցցէ». Յովհ. ԺԱ. 25. բայց
ըստ Առակաց՝ Թուի յաչս անզգամաց թէ մեռաւ.
Իմաստ. Գ. 2։

Լոս եթէ կամիցի առաւել ևս ասել՝ լուիցէ. Աբ-
րահամ յաշխարհի ասա՝ մինչ կենդանի էր յԱստուած
և 'ի մարդիկ, ստիպեալ 'ի բանական սիրոյն իւրմէ
որ առ Աստուած և առ մարդիկ, նովին սիրով բա-
բեխոսէր և աղաչէր զԱստուած անցուցանել զՍո-
ղոմն 'ի Սոդոմացւոց և 'ի Գոմորացւոց անտի. այլ
յորժամ փոխեցաւ յաշխարհէ, ոչ արգել զնա այ-
նուհետև 'ի բարեխոսելոյ. զի որ ընդունելի էր ա-
ռաջի Աստուծոյ բարեխոսութիւն բանական հոգւոյ
նորին, ոչ ապաքէն նոյն բանական հոգի նորա միշտ
կենդանի կայ առաջի Աստուծոյ՝ 'ի բանական սիրոյն
անբաժան։

Բանզի սէրն բանական՝ ոչ է իբրև մարմնական
ձիր ինչ արտաքին և անցողական, և ոչ առ փրկու-
թիւն անձին մասնաւոր շնորհ ինչ պարգևական. այլ

խնացականին հոգւոյ՝ էապէս ներքին կատարելութիւն մշանջենական, որով հոգին ճանաչել գոլ էակ անմահական։ Ուրեմն սէրն այն՝ ոչ միայն ի հոգիս արդարոց, այլ և ի հոգիս մեղաւորաց իսկ կայ և մնայ միշտ անեղծ և անխախտան, զոր ուսուցանէ մեզ և առաւել Մեծատան. որոյ չուառաւել հոգին՝ մինչ ի տանջանսն էր և անդրոյս յաղատութենէն, բռնադատեալ լինէր անդ ի բանական սիրոյն իւրմէ զհնգեսին եղբարս իւր խնամել, «Օ՛ի մի և նոքա (ասէ) գայցեն յայս տեղի տանջանաց»։ Ղ՚-Ի. Ժ.Զ. 28։ Օ՚ղմանայր արդեօք եղկելի պատկերացն ի տապոյ անտի անչիջանելի հրոյն, եթէ կարող լինէր Աբրահամ արձակել զՂազարոս ի տուն հօր նորա առ ի տալ վկայութիւն. բայց որ ի զոմանայն հատաւ յոյս նորա, գտնէ Թողացի ի բռնութենէ բանական սիրոյն՝ որ անդ սկսաւ սատկագոյն տանջել զնա. զի ոչ երբէք ողորմեցաւ աղքատաց և կարօտելոց, այլ անողորմ վարուքն իւրովք հպարտացեալ՝ չար օրինակ եղեալ էր եղբարցն իւրոց։ Վասն զի զսէրն՝ զոր թէ առ Աստուած և զոր թէ առ ընկերն պարտէր, զայն ամենայն վասն անձին իւրոյ պահեաց։ և յամենայն ի կենաս իւր բեհեղեայ և ծիրանեայ ապանելեօք և համադամ կերակրովք միայն զանձն իւր սիրեաց՝ և զեղբարս իւր ատեաց, որով եղև ատաւծատեաց. զի ըստ սրբոյն Յովհաննու՝ «Որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես՝ զիա՞րդ կարիցէ սիրել»։ Ա. Յօհ. Դ. 20։ վասն այնորիկ և սէրն այն՝ արդարապէս եղև նմա յայնժամ դատախազ իրաւաբան, որ մատնեաց զնա օրդանն անմահի՝ դժնդակ խղճի՝ անողորմ դահճի։

Բանդի սէրն բանական՝ էապէս բազմեալ ի գերակայ ստաճար խորհրդոյ մարդկային հոգւոյ, խնդրէ միշտ կենաւիոյ լինել ընդ Աստուծոյ՝ և Աս-

տուծով կենակցիլ ընդ անձին և ընդ ընկերին. վասն զի մարդն է բանաւորութեամբ Աստուածասէր, բարեսիրութեամբ՝ անձնասէր, և երկոքեանքն ընկերասէր. վասն որոյ մարդասէրացն է հրեշ երկկերպարան, գազան մարդակերպ՝ կամ մարդ գազանակերպ։ Այլ զի առաջին և ըստ ինքեան սիրելի մարդկան՝ է Աստուածն անչափ և անսահման, ապա և սէրն առայն՝ պարտ է լինել անչափ և անսահման. վասն որոյ այն առաջին պատուիրան տուաւ մարդկան «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ... և յամենայն զօրութենէ... մտաց քոց»։ Ղ.ԲՆ. Գ. 27։ Իսկ անձն և ընկեր իւր՝ ըստ որում սահմանաւոր և համաչափ, և սէրն առ նոսա՝ պարտ է լինել սահմանաւոր և համաչափ. վասն որոյ տուաւ երկրորդ պատուիրան «Սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո»։ Մատթ. ԻԲ. 39։

Այլ ահա այն սէր է՝ որով մարդ յարժամ բազմիցի յընթերիս ուտել և ըմպել, զքաղցեալս և զծարաւիս յիշէ, և ըստ կարողութեան իւրում կերակրէ զնոսա և արբուցանէ. և յարժամ զգենու զհանդերձս փաղաւորս, զմերկսն յիշէ և զգեցուցանէ. և 'ի հանդչելն 'ի տան իւրում, զօտարս ժողովէ. և 'ի զուարթ առողջութեան անձին իւրում՝ 'ի տեսս գնայ հիւանդաց. և 'ի խրախճանս բարեկենդանութեան իւրում՝ ըստ խրատու Աւետարանին այնպէս յուշ լինին նմա կապալքն և չարչարալքն, որպէս թէ ինքն կապեալ և չարչարեալ իցէ։ Եբր. ԺԳ. 3. վասն որոյ երթեալ 'ի կաղարանս նոցա, բանիւ և արդեամբ զնոսա մխիթարէ։

Այն սէր է՝ որով մարդ 'ի ծանր հիւանդութեան իւրում կամ 'ի ժամանակի մահաւիթ փորձութեան՝ որպէս յոժարութեամբ հաճի կորուսանել զդանձս իւր վասն առողջութեան անձին և կե-

նաց. ի դէպ ժամանակի առաւել ևս յօժարի կորուսանել զկենաս իւր վասն տուողին կենաց. և այնուհետև զահատակեալ ելանէ ընդդէմ թշնամեաց հաւատոյ և հայրենեաց, որոյ անունն գրեալ լինի ի գիրս Դպրութեան կենաց. Փիլիպ. Դ. 3. Յայտ. ԻԱ. 27։

Այն սէր է՝ որով մարդն արդարապէս կշռէ զամենայն աբարս, և հաւասարէ զամենայն զտուրևառս իւր. և որպէս կամի՝ թէ այլք արասցեն ինքեան, ըստ պատուիրանի Տեառն այնպէս առնէ և ինքն նոցա. Մատթ. Է. 12։

Այն սէր է՝ որով մարդ յօրժամ անկանի ի սուգ թախծագին վասն մեռանելոյ համաբուն սիրելւոյն իւրոյ, գերաբուն սիրելեաւն մխիթարի. և օրհնելով զկամս Նորին՝ ասէ ըստ Յովբայ համբերողին, «Տէր եւ՝ և Տէր էառ». Յովբ. Ա. 22։

Այն սէր է՝ որով մարդ ոչ միայն անյիշաչար լինի վասն յանցանաց ընկերին, այլ և բարի առնէ ատելեաց և թշնամեաց իւրոց. և բարեխօսութեամբ աղաչէ զԱստուած վասն նոցա ասելով, «Շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց՝ զթողութիւն՝ որ առ իս յանցանաց. և դարձո զնոսա ի չաթեանցն զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի եղիցին». Հոռոմ. Ի. 14։

Այն սէր է՝ որով քահանայք և վարդապետք եկեղեցւոյ՝ նախանձաւոր եղելք օրինացն Աստուծոյ, զժողովուրդս իւրեանց աւետարանական բանիւք հանապազ խրատեն. զմիտս նոցին լուսաւորեն. զհաւատս նոցա հաստատեն. ի խմորոյ աղանդաւորաց զգուշացուցանեն, և զստամբական քաղցրութիւն և խոնարհութեամբ համոզեն. զգաւառսն մխիթարեն. զտրտմեալսն սփոփեն. զայրիս և զորբս հայրաբար խնամեն. առաւել քան զսիրոյս իւրեանց՝ ըստ պէտս տնանկաց տեսանեն. տքնին ի շինութիւն և

'ի հաստատութիւն միամիտ ժողովրդոց՝ կալ մնալ միշտ ընդ հովանեաւ սուրբ Եկեղեցւոյ։ Մանաւանդ որք 'ի հեռաւոր տեղիս բնակեալք իցեն՝ և ուրեք աւանդ Հովուի մնացեալք, առ 'ի գնալ յայցելութիւն նոցին՝ Առաքելական վարուք յանձն առնուն զամենայն, «Վ ի շտս 'ի գեղոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս 'ի հեթանոսաց, վիշտս 'ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս 'ի ծովու, վիշտս 'ի սուտ եղբարց»։ Բ. Կորն. Ժ.Ա. 26։ Որովք պարզերես և համարձակութեամբ մատչին առաջի Աթոռոյ երկնաւոր քահանայապետին ասելով, «Ահա ես և մանկունք իմ»։ Եբրայ. Բ. 13. և արժանի լինին անդ՝ իբրև ծառայ բարի և հաւատարիմ մատնել յուրախութիւն Տեառն իւրեանց։ Մատթ. ԻԵ. 21։

Այն սէր է ըստ պատկերի և նմանութեան Աստուծոյ՝ բան իմացութեան և մշտնջենաւորութիւն հոգւոյ։ որով հոգին է բանաւոր իմացական և անմահ իբրև զհրեշտակս երկնից, որք են իմանալի բանաւոր հոգիք հարկաւորք։ Որոց զսէրն առ մարդիկ՝ կարձեսցուք աստանօր ցուցանել 'ի գործոյ անտի աղօթամատոյցն Ռափայէլի՝ սպասաւորելով առ Տովիթի և առ պատանին Տուբիա։ Տովէ. Գ. 24. Շատ է մեզ իմանալ առակաւ սրբոյ Աւետարանին, որ վասն անպտուղ ծառոյն՝ օրինակի անբարեգործ մարդոյն։ Քանզի տէր պարտիզին պատուիրէր զծառն կտրել՝ որ ընդ վայր զերկիր խափանէր, բայց սէր պարտիզպանին 'ի նա ձեռն մնել ոչ ներէր. և այն ոչ միանգամ, այլ 'ի լրանալ միոյ միոյ երից ամաց՝ երիցս և նա միջնորդ և բարեխօս եկաց։ որ հեղկի հայցուածով և զդարմանն խոստանալով, յերիս ժամանակս իսկ կենաց մարդոյն՝ զպտուղն Տեառն անցուցանէր։ Լուկ. Ժ.Գ. 6 — 9։ Իւ եթէ պարտիզպանն այն չէ փոխանակ հրեշտակի 'ի Քրիստոսէ առակեալ, զինչ

այլ քան զայն յարմարագոյն կարելիս իմանալ. իսկ եթէ ոք հակառակեալ պնդիցէ լինել սոսկ պատմութիւն ոչ մեկնական՝ այլ միայն բան նկարագրական, զայնպիսին արժան է կոչել նկար մարդակերպ. որ թէ ոչ յամառեալ կամակորիցէ, լուիցէ զբուն և զհարազատ իմաստս այնր Առակին, զոր և մերս Հրաւետոր յաղօթամատոյց գիրս իւր այսպէս բացատրէ. «Որք և պտղակորոյս անկոյ թզենւոյն եռամեանն դատարկութեամբ, որ զընաւ յաւիտեանս պարտնակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրութեամբն յերկրաձգելոյ՝ յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթիւրն պաճուճելոյ՝ զրկեալ ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս, սոքա բարեխօսք՝ հանդերձիչք՝ այլ և խնամակալք». Ն-Ը. ՁԱ.

Կրդ՝ որպէս հոգեղէն զուարթունք երկնից, նոյնպէս և հոգիք սրբոց՝ որք դասակիցք եղեն նոցա, լսեն զաղաչանս մեր բարեխօս լինել առ Տէր. Յե մի անհնարին ինչ թուիցի քեզ՝ թէ զնմրդ կարեն լսել, որք անհասանելի հեռաւորութեամբ անջատեալ կան ի մէնջ. վասն զի էութիւն ամենակալին Աստուծոյ՝ և՛ զմեզ և՛ զնոսա բովանդակ ունի յինքեան. զի նա է «Տէր Աստուած ամենայնի, զօրաւոր յամենայնի. անպարագիր և անվայրափակ տեղի ամենեցուն. բոլոր իսկութեամբ հուսպ յամենեսին». Ն-Ը. ԻԳ. Իսկ որ մերձ է յամենեսին բոլոր իսկութեամբ, և զամենայնն ունի բովանդակ յինքեան. նա ինքն ազդ առնէ Երանելեացն այնոցիկ զՏնօնասիրական պաշտամունս Եկեղեցւոյ և զաղաչանսն ի բարեխօսել. և այն ազդարարութիւնն Աստուծոյ՝ զոր ասեմք, մի դու կարծիցես իբրու ի մէնջ մտացածին ինչ լինել. այլ ուսեալ եմք յոչխարագիւտ առակէ սրբոյ Աւետարանին, որ ի գտանել առն այնորիկ զկորուսեալ

ոչխար իւր, «Դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խնդա-
լով», Լուկ. Ժե. 5. և մինչ երթեալ հասանէ ի տուն,
առ խնդակից առնելոյ ինքեան՝ (քանզի ի միտ առ),
«Կոչէ զբարեկամս և զդրացիս՝ և ասէ ցնոսա. ու-
րախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարն իմ զկորու-
սեալն. Նդ. Ժե. 6։ Նոյնպէս ասեմ ձեզ՝ յաղագս
ապաշաւորութեանն Աստուծոյ ասացեալ։

Բայց գուցէ կամիցիս դու՝ վերոյ եղեալն լսել,
կամ իբրև աչօք տեսանել։ Հայեցայ ի մարգարէն
Եղիա ի վերացեալն շարժմամբ յերկինս. որ ի յերկ-
նից անտի ի կայից իւրոյ՝ սրպէս կարաց իմանալ
զչարագործութիւնս կամալ արքային Յովրամայ որ-
դւոյ բարեպաշտն Յովսափատայ. կամ զիարդ կարաց
լսել զաղաղակս տառապեալ օրինապահաց, որք էին ի
մէջ ժողովրդեան Իսրայէլի, Բ. Մնաց. ԻԱ. 12—20։ Որք
թերևս ի ժամանակէ անտի սովոր էին զեղիա կար-
դալ, ըստ որում ասէին Հրէայք վասն Յիսուսի. Մատ.
ԻԷ. 47։ Բայց իսկ է՝ զի ազդեաց նմա Աստուած. և
նա առաքեաց Յովրամայ զգիր յանդիմանութեան ի
ձեռն ուրուք մարգարէի կամ ի ձեռն հրեշտակի
միոյ կերպարանաւ մարդոյ. զի թերևս զզնաստի Յով-
րամ և ապրեսցի յառաջակայ պատուհասէն. բայց
կամացն այն ոչ մարգարէին լուեալ և ոչ երբէք
զզնացեալ՝ մինչև ըստ գործոց չարեացն իւրոց ար-
ժանապէս պատուհասեալ մեռանէր։

Այս և յորժամ կազմեցաւ ի Բաբելոն արքու-
նական սաստիկ հրամանաւ այն սոսկալի հրաբորբոք
տանջանարան Երից մանկանց՝ եօթնապատիկ ջերուու-
ցեալ, յորում միջնորդական յուսով աղօթէին առ
Աստուած և ասէին. «Մի՛ ի բացէ առներ զզորմ-
ութիւնս քո ի մէնջ, վասն Աբրահամու սիրելւոյ
քոյ՝ և վասն Իսահակայ ծառայի քոյ՝ և վասն Իսրայէլի
սրբոյ քոյ». Դանիէլ. Գ. 35. զինչ ասես. զլացան Աստ-

ուած յայնժամ ազգ առնել հոգւոց նոցին զմաղթանս նահատակացն այնոցիկ, և ցուցանել սիրելեաց իւրոց զփառաւոր և զզուարճալի տեսարան այնր հրախառնոց հանդիսին։ Այսպս ոչ ոք կարէ միտել զայս ուղիղ վարդապետութիւն, եթէ ազգ առնի Աստուած երանեալ Եկեղեցւոյ՝ զաղաչանս զինուորեալ եկեղեցւոյ 'ի բարեխօսել. նա և զոյն ամենայն բարիս և զփառս իւր, զոր՝ մինչդեռ յաշխարհի աստ էին, յամենայն 'ի կեանս իւրեանց ցանկային նոքա տեսանել։

Մեծ է այս ընդհ պարգևեալ 'ի Մարդասիրէն վասն բարեպաշտ և Աստուածասէր ծնողաց, որք կամին՝ որդիքն և ընտանիք իւրեանց լինել ինքեանց նշան բարութեան։ Այլ ծնողքն այնոքիկ՝ որչափ կեան աստ 'ի կեանս իւրեանց, պարտաւորք են ինքեանք ուսուցանել զհաւատս և զպատուիրանս Եկեղեցւոյ, և կրթել զնոսա 'ի մանկութենէ առաքինի քաղաքավարութեամբ և Աստուածպաշտութիւն. և մի ապաստան առնել զնոսա 'ի գանձս և 'ի կալուածս, այլ յանձն առնել 'ի խնամս Արարչին, զի պահեսցէ զնոսա ընդ հովանեաւ սուրբ Եկեղեցւոյ՝ և արասցէ նոցա յիշատակ յաւէրժական օրհնութեան։ Վասն զի հոգիք բարեպաշտ ծնողաց յետ հրաժարելոյ յայսմ աշխարհէ՝ զոր ինչ և բարիս գործեսցեն աստ որդիք և ընտանիք իւրեանց, զոյն ամենայն յԱստուածուստ անտի անշուշտ ունին իմանալ. քանզի ազգ առնէ նոցա Աստուած և ընդ զգանկութիւն սիրոյ նոցա՝ և յաւելու 'ի նոսա ուրախութիւն մեծ։ Այնպէս իմա և ընդ հակառակն վասն անհոգ և անբարեսէր մոլի ծնողաց՝ զաղերտալի թշուառութիւնս զաւակաց իւրեանց, որք յաւելուն 'ի նոսա տանջանս ապաշաւանաց. եղիցի քեզ օրինակ Հեղի քահանայն, որ վասն անհոգ լինելոյ խրատել զորդիս իւր՝ ան-

կեալ յաթոռոյն իւրմէ ողնաբեկ մեռաւ՝ և քահանայութիւն ի տանէ նորին վերջացաւ, Ա. Թագ. Ի. Դ.

Լուր ևս զայս՝ զի մի տարակուսեալ կայցես ի վերայ երկուց ճանապարհայ, և վայելցի քեզ անդ ի գլուխս վայն ողբալն։ Աբրահամ՝ մինչ յաշխարհի էր, ցանկայր տեսանել զոր գալատեան Փրկչին աշխարհի. և թէպէտ յառաջ քան զժամանակ մարդեղութեան նորա՝ մեռեալ էր Աբրահամ, և անցեալ ի վերայ նորա ազգք երիցս չորեքտասանք, բայց որ ցանկայր տեսանել զոր Փրկչին՝ էր սէրն բանական առ Օծեալն Սեսիայն ի հոգին Աբրահամու կենդանի և անվախճան։ Իւ յորժամ Փրկիչն եկն յաշխարհ, եթէ ոչ լինէր առ Աբրահամ ազգուութիւն և ցուցումն առ ի Աստուածութենէ, զնարդ կարէր տեսանել և ուրախ լինել. բայց որ ազգեացն նմա և եցոյց զոր Գալատեան իւրոյ, նա ինքն ասաց. «Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զոր իմ, եւ տես՝ և ուրախ եղև». Յովհ. Ը. 56։

Այլ մեք՝ որ հաւանեալս եմք այսմ Աւետարանական ճշմարտութեան, և պատրաստեալ եմք մերձենալ ի սուրբ Սեղանն տէրունական, գիտեմք՝ եթէ չեմք բաւական ապաշխարութեամբ մերով արժանաւոր լինել ի Հաղորդութիւն Աստուածային խորհրդոյն՝ յորմէ դողան զուարթունք երկնից. վասն այնորիկ միաբան ամենեքեան խնդրեմք և աղաչեմք զԱստուած՝ զի աղօթիւք և բարեխօսութեամբ Սրբոց իւրոց ընկալցի զանդրուածս սրտից մերոց, և ողորմութեամբն իւրով թողցէ մեզ զյանցանս մեր. զի և մեք ընդ արժանաւորացն, «Ասասցուք... հաւատարմութեամբ առաջի ամենայն շնորհաց նորա». Լիթրգ. Դ. 16։

Իսկ վրիպեալքն ի ճշմարտութենէս յայսմանէ՝ եթէ բամբասեն զմեզ ի քարոզութեան իւրեանց.

[Ինձ ոչ բնաւ այս կարծիք՝ որ հաւանեալս եմ ճըշ-
մարտութեանն. Գաղ. Ե. 7։ Քանզի Որդին Աստուծոյ ի վերայ խաչին վասն չարչարողաց իւրոց և խաչահանուաց մարդկային բանական սիրոյն բարեխօս լինէր առ Հայր ասելով, «Հայր՝ թող սոցա, զի ոչ գիտեն թէ զինչ գործեն». Գ-ղ. Ի.Գ. 34։

Այլ ահա աստանօր դարձեալ կալան զիս զարմանք անհնարին պաշարմամբ. վասն զի որպէս խորհուրդ փրկագործ Հաղորդութեանն Քրիստոսի անլուր և անօրինակ, նոյնպէս և փրկաւէտ Միջնորդութիւն նորա առ Հայր՝ անլուր և անօրինակ։ Ո՞վ անհասանելի մեծութեան և անքննելի Ցնորէնութեան։ զի որ ի վերայ խաչին նոյն ինքն Քահանայ՝ և Պատարագ Աստուծոյ Հօր, ահա նոյն ինքն Մարդ՝ միջնորդ Աստուծոյ Հօր, և Աստուած՝ զմիջնորդութիւն մարդկային ընդունող ընդ Հօր. ոմ ետես՝ ոմ լուաւ ի յաւիտենից միջնորդ այսպիսի։ Ահա այս է նոր Միջնորդ մի՝ անլուր և անօրինակ և անհամեմատ. վասն զի ի կողմանէ մարդկութեան միջնորդող՝ և ի կողմանէ Աստուածութեան ընդունող՝ նոյն ինքն է Աստուած և Մարդ՝ որ Մի է. վասն այնորիկ գրեաց Հոգին սուրբ ի ձեռն Առաքելոյն, «Այն է միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդ Յիսուս Քրիստոս». Ա. Տիմ. Բ. 5։

Իւր որ եղև նա միջնորդ այնպիսի՝ որ Մի է ըստ որում Աստուած և մարդ, նա՝ և զմարդկային միջնորդութիւնն և բարեխօսութիւնն ի Սրբոց և ի սիրելեաց իւրոց ոչ արգելեաց. այլ մանաւանդ միջնորդութեամբն իւրով այնուրիկ՝ ուսոյց միջնորդել և բարեխօսել առ Աստուած. յորմէ ուսեալ առաջին վկայն իւր սուրբ Ստեփաննոս՝ վասն քարաձիգ ժողովրդոյն ծուռնր եղեալ աղաղակէր ասելով, «Տէր՝ մի համարիր դոցա զայս մեղս». Գործ. Է. 59։

Լուիցեն վրիպեալքն յայսմ ճշմարտութենէ զմարդկօրէն բարեխօսութիւնն Քրիստոսի, և զոր ի նմանէ ուսեալ՝ սրբոյն Ստեփաննոսի. զոր ոչ առնէին վասն բարեպաշտ Տօնասիրաց և բարեխօսութիւն հայցողաց, այլ մանաւանդ վասն չարչարողաց՝ սպանողաց և քարկոծողաց։ Իսկ յորժամ մեք Տօնասիրական սպասուով խնդրիցեմք զբարեխօսութիւնս Սրբոց, և նոքա Աստուածուստ անտի իմացին ըզխնդրուածս մեր, լուե՞ն արդեօք, կամ անփոյթ լինին զմէնք. ա՛չ ապաքէն նոյն իսկ սէրն ի նոսա՝ որով բարեխօսէին մինչ ի մարմնի ասա էին, և բարեխօսութիւնք նոցա ընդունելի լինէին. և արդ նովին սէրով կեան անմահ, և բնակեալ ի սէրն Աստուած՝ և Աստուած ի սէր ի նոսին. զի «Աստուած սէր է, և որ կայ ի սէրն՝ բնակեալ է Աստուած, և Աստուած ի նմա բնակէ». Ա. Յովհ. Դ. 16։

Վասն այնորիկ ունիմք ահաւասիկ բարեխօս՝ մարդ Յիսուս Քրիստոս, և զմայր նորին զսուրբ Աստուածածին և զամենայն Սուրբս. որովք առաւել ևս հաստատիմք ի յոյս, եթէ մարդասէրն Աստուած վասն բարեխօսութեան նոցա՝ ոչ հայի ի սակաւութիւն ապաշխարանաց և ի բազմութիւն մեղաց մերոց. այլ հայեցեալ ի զղջումն սրտից և յարտասուս աչաց մերոց, ամենառատ ողորմութեամբն իւրով գթասցի ի մեզ՝ քաւել և սրբել զամենայն զմեղս և զանօրէնութիւնս մեր։ Ապաքէն օ՛ն և օ՛ն արասցէ մեզ Տէր՝ եթէ անման ելանիցեմք ի սուրբ Հաղորդութենէ Աստուածային խորհրդոյն։

Լա՛ւ ահա ասա է տեսանել յափշտակութիւն Աբքայութեանն երկնից. զի յաւուրց անտի լրանալոյ Մարգարէական օրինաց՝ արդարև «Մինչև ցայժմ աբքայութիւն երկնից բռնադատի, և բռունք յափշտակեն զնա». Մատթ. ԺԱ. 12։ Վասն այնորիկ յա-

սել Պատարագչին զձայն սարսափելին՝ Ի Սրբոյն-Լիկ-ոն սրբոյ, ըստ խորհրդաւոր արարողութեան Հայաստաւ նեայց եկեղեցւոյ՝ իբրու բանաբարական ձայնարձակութեամբ Դպիրք բարձրաձայն աղաղակեն, «Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր»։

Յետեալ Պատարագիչն զայն զբուռն յարձակուրդ և եռանդագին փափագ սրտից նոցա ի սուրբ Հաղորդութիւն, իսկայն փոխէ զեղանակ բանին՝ առ ի համարել և զիջուցանել զկիրս նոցին. և այլով դիւրալուր եղանակաւ յուսադրէ զնոսա վերստին, կարդալով զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի. և մաղթէ հայել յառաջակայ ժողովուրդն յայն՝ սրբ կատարեալ ջերմեռանդութեամբ և լցեալ սիրով անկեալ առաջի երկիրպագանեն, և Սրբոյն բարեխօսութեամբ համարձակեալ խնդրեն մերձենալ յայս ի Սեղան անմահական։

Յայնժամ և նոքա համալեալք՝ ամենայն խոնարհութեամբ անսան Պատարագչին. և հետեւելով նոքին՝ ակամանին ապա ինքեանք ևս ջերմեռանդ սրտիւ օրհնել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի՝ ողբմելի ձայնիւ մեղմագին. և ակնկալեալ սպասեն հրամանի նորին ճաշակել զվերափոխելին հոգւոց իւրեանց՝ ըստ կենդանի և կենդանարար Հայոց երկնային։

Իսկ յորժամ լսեն զայն տենչալի հրամանն ի Պատարագչէն՝ որ ասէ, «Ի սուրբ ի սուրբ պատուական Մարմնոյ և Արիւնէ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում. Սա է կենաց, յոյս, յարութիւն, քաւութիւն, և թողութիւն մեղաց»։ Յայնժամ ձայնիւ ցնծութեան սաղմոսերգին և միաբան օրհնեն ասելով, «Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա։ Օ՛ն՝ գրքին իւր

տայ մեզ կերակուր, և սուրբ զրիւն իւր ցողէ ի մեզ։ ալէլուիա . . . »։ մինչև քարոզել Սարկաւագին « Լրկիւղիւ և հաւատով յառաջ մատիք, և սրբութեամբ հաղորդեցարուք »։ զի ահա եղև ձեզ հրաման ըստ մեծի ողորմութեան երկնաւոր Թագաւորին՝ յառաջ մատչիլ և սրբութեամբ հաղորդիլ։

Լ.ին զուարթարար ձայն քարոզին առաւել քան զամենայն երգս երաժշտական մեղեդեաց՝ յականջս նոցա հնչէ քաղցրագին։ Նմանեալ՝ ասեմ, ձայնի փոքոյ Գաբրիելին՝ զոր հնչեցէ զարթուցանել յարուցանել զննջեցեալսն, որք առաքինի վարուք և մաքուր խղճիւ՝ կատարեալ հաւատով և հաստատուն յուսով յարութեան ի Քրիստոս ննջեցին։ Որոց հոգիքն արժանաւորեցան ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց ճշմարիտ լուսոյն Քրիստոսի յաւուրն կոչման՝ յորում եղև անջատիլ նոցա ի մարմնոց իւրեանց, « Լու հանգչիլ յուսով բարեաց յօթեւանս արդարոց »։

Իսկ ի հաւատացելոց և յուսով ննջեցելոց՝ եթէ անմաքուր խղճիւ փոխեցան յայսմ աշխարհէ, ըստ Աստուածաշունչ վարդապետութեանն սուրբ Լուսաւորչին մերոյ՝ « Լ.ՍԼ կայանք են նոցա »։ կարօտեալք օժանդակութեան աղօթից և Պատարագաց սուրբ Եկեղեցւոյ։ Որովք դիւրագոյն լինի նոցա հաստատացանել զպարտս իւրեանց՝ մինչև զյետին նաքաբակիսն. և այնպէս սրբեալ և մաքրեալ՝ արժանաւորին և նոքա « Հանգչիլ յուսով բարեաց յօթեւանս արդարոց »։

Լ.սացաւ՝ « Հանգչիլ յուսով բարեաց »։ վասն զի հաւատացեալքն երբ մեռանին, հոգիք նոցա չունին այլ նիւթս հաւատոյ. զի « Հաւատք՝ են յուսացեալոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն ոչ բոց ոչն երևին »։ Եբրայ. ԺԱ. 1. Օ.ի որք ասա ի

մարմնի հաւատով տեսանէին զԱստուած «Իբրև ընդ հայելի օրինակաւ»։ Ի կէտ անքատման ի մարմնոյ իւրեանց տեսանեն «զէմ յանդիման»։ Ա. Կորն. Ժ.Գ. 12։ Ասոյց ունին զայս բարեաց մինչև յօր մեծի գալստեանն Քրիստոսի՝ դարձեալ միաւորիլ ընդ մարմնոյ իւրեանց. զի որք յաշխարհի սատ ուղղափառ հաւատով մինչև ի կէտ կոչման իւրեանց քաջալերեալ զինուորեցան ի մարմնի, և մարմնոյն իւրեանց յաղթեցին փառաց և ցանկութեան աշխարհի. այն է յայս նոցա՝ զի զփառս երկնից արքայութեան վայելեցեն և նովին յաղթական մարմնով. և յետ այնր փառաւորեալ միաւորութեան՝ յայսն ևս հաստանի. զի չեր այլ մի ինչ նոցա յաւսալի։ «Ի զոր տեսանէ զբ՝ զի ևս յուսայ»։ Հռովմ. Ը. 24։ Ասոյց սերն է ի նոսա մշտնջենական՝ անեղծ և անվախճան. որոց վախճանն է միշտ սիրելին իւրեանց՝ Աստուած յաւիտենական։

Այլ ահա այնու Աստուածասէր հոգւով պատրաստեալքն փափագին մերձենալ ի Սեղանն անմահական՝ ճաշակել զմարմին և զարիւն Տէրունական. վասն որոյ մուտք իւրաքանչիւրեանց, և սպասեն կոչման Սարկաւագին՝ որպէս Խմաստուն Կուսանքն վառեալ լապտերօքն՝ տենչալի ձայնի քարոզին։

Այլ ներեսջիք ինձ՝ որ ասեմ, եթէ քարոզն Սարկաւագին տենչալի է ինձ և փափագելի քան զձայնն հանդերձեալ այնր քարոզին, որ ի միւսանգամ գալստեան անմահ Փեսային կոչեսցէ զկուսանսն յառնել ընդ առաջ՝ և մտանել յառագաստ նորին։ քարոզելով «Ահա Փեսայ գայ՝ արիք ընդ առաջ նորա»։ Մատթ. Իե. 6։ Իսկ սարկաւագն կոչէ՝ Երկիւղիւ և հաւատով մատչիլ յառաջ, և սրբութեամբ հաղորդիլ Մարմնոյ և Արեան կենարարին։ որով լինի սատ ի կեանս միաւորիլ և բնակիլ ընդ երկնաւոր Փեսային։

Իրանի այնոցիկ՝ որք սրբութեամբ մատչին և պժմանաւորութեամբ հաղորդին. և հոգևոր ուրախութեամբ օրհնեն և գոհութեամբ երդանակեն աւելով՝ «Յոհանամբ զքեզ ՏԷր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ. Բաշխելով զմարմնդ և զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց»։

Ի՛հա կեանք, և առաւել ևս կեանք, զի Քրիստոս ևկն յաշխարհ վասն մեր. որք հաւատալով ի նա՝ զկեանս ունիցիմք, և կերակրեաց զմեզ յանմահական Սեղանոյ իւրոյ՝ զի առաւել ևս ունիցիմք։ Յովհ. Ժ. 10։